

## Հայ Որբերու Գորգը Պիտի Ցուցադրուի Սպիտակ Տան Կողմէ

Հոկտեմբեր 15-ին Սպիտակ Տան մամուլի գրասենյակը հրատարակեց հաղորդագրութիւն մը, տեղեկացնելու համար որ Նոյեմբեր 18-23-ը Սպիտակ Տան Այցելուներու կեդրոնէն ներս տեղի պիտի ունենայ ցուցահանդէս մը՝ «Շնորհակալութիւն Միացեալ Նահանգներ. Երեք Նուէրներ Նախագահին՝ Արտասահմանի մէջ Ամերիկեան առատաձեռնութեան համար» խորագիրին տակ:

Ազգային Ապահովութեան Խորհուրդի բանբեր Պէրնամէթ Միլհրնի անունով հրատարակուած յայտարարութեան մէջ ըստած է որ, այս առթիւ պիտի ցուցադրուին երեք նուէրներ, որոնցմէ մէկը պիտի ըլլայ Ղազիր Գորգը, որ նաեւ ծանօթ է «Հայ Որբերու Գորգ» անունով: Ան յանձնուած է Ամերիկայի նախագահ Քէլվին Քուլիճին՝ 1925-ին որպէս երախտագրութիւն Ամերիկայի կողմէ տեղա-

հանուած հայ որբերուն ցուցաբերուած օգնութեան համար:

Հաղորդագրութեան համաձայն, գորգը կը ներկայացնէ Եղեմի պարտէզի պատկերը եւ կազմուած է 4 միլիոն հիւսուածքներէ: Անոր կազմութիւնը տեւած է 18 ամիս: 11.5-ով 19 ոտք գորգը կը գտնուի բացառիկ վիճակի մէջ: Նախագահ Քուլիճ, 1929-ին իր պաշտօնավարութեան աւարտի գորգը տարած է միասին, սակայն անոր ընտանիքը 1982-ին որպէս նուէր գորգը վերադարձուցած է Սպիտակ Տուն: Անկէ առդին գորգը ցուցադրուած է միայն երկու անգամ՝ որպէս յիշեցում Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու ժողովուրդներուն միջեւ մօտ բարեկամութեան:

Ցուցադրուելիք միւս երկու իրերն են, 1930-ին երիտասարդ Շարք էջ 5

## Հայաստան Պաշտօնապէս Միացաւ Եւրասիական տնտեսական միութեան



ԵՏՄ գագաթի ժողովի ընթացքին Սերժ Սարգսեան կ'ստորագրէ Միութեան անդամակցելու պայմանագիրը

Հոկտեմբեր 10-ին Միւնխի մէջ տեղի ունեցած Եւրասիական տնտեսական բարձրագոյն խորհուրդի գագաթի ժողովի ընթացքին Հայաստան պաշտօնապէս միացաւ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵՏՄ) եւ համապատասխան պայմանագիրը ստորագրուեցաւ պետութիւններու ղեկավարներու մակարդակով:

Այսպիսով, Հայաստան Ռուսաստանի, Պելառուսի եւ Ղազախստանի հետ միասին կը դառնայ Միութեան լիիրաւ անդամ, որ կը սկսի գործել 2015 թուականի Յունուար 1-ին:

Կը սպասուի, որ յառաջիկային ԵՏՄ-ին կը միանայ նաեւ Ղրղզստանը:

Այս առթիւ Ղազախստանի նա-

խագահ Նուրսուլթան Նազարբաեւ յայտարարեց, որ Հայաստանի սահմաններու հարցով գտնուած է միջին լուծում, առանց սակայն յստակացնելու այդ լուծումի մասնաւորութիւնները:

Յիշեցնենք, որ մի քանի ամիս առաջ Նազարբաեւ յայտարարած էր, որ Հայաստան ԵՏՄ-ին կը միանայ ՄԱԿ-ի կողմէ իր ճանչցուած սահմաններով, ինչ որ կ'ենթադրէր Հայաստանի միացումը առանց Ղարաբաղի:

Միւս կողմէ, Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին յայտարարեց, որ Հայաստանի անդամակցութեան արդէն առաջին 1-2 տարուայ մէջ կը տեսնուին դրական արդիւնքներ:

## Լոս Անճելոսի Գաւառի Շէրիֆ Թեկնածուի Այցը ՍԴՀԿ Կեդրոն



Շէրիֆի պաշտօնի թեկնածու Ճիմ ՄըքՏանըլ հանդիպման մասնակիցներուն հետ

Լոս Անճելոսի Պիչ քաղաքի եւ շրջակայքի ոստիկանապետ եւ Լոս Անճելոս գաւառի գլխաւոր շէրիֆի պաշտօնի թեկնածու Ճիմ ՄըքՏանըլ, անցեալ Չորեքշաբթի Հոկտեմբերի 8-ին այցելութիւն մը տուաւ Փաստինայի ՍԴՀԿ կեդրոնը, հանդիպելու համար Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) ղեկավարութեան հետ:

ՀԱԽ-ի անունով բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ իրաւաբան Գրիգոր Մոլոյեան եւ գինք ծանօթացուց ՍԴՀԿ-ի կեդրոնական վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի ու ենթակառուցներու պատասխանատուներուն: ՀԱԽ-ի գործունէութեան մասին ամփոփ գեկուցումով մը հանդէս եկաւ Փիլիքը Տարազեան:

Շուրջ երեք ժամ տեւող սոյն շահեկան հանդիպման ընթացքին Պր. Ճիմ ՄըքՏանըլ իր գոհունակութիւնը յայտնեց ծանօթացման

համար, ինչպէս նաեւ անվերապահօրէն գնահատեց հայ գաղութի օգտաշատ ներդրումը տարբեր բնագաւառներուն մէջ: Իր հերթին Պր. Մըք Տանըլ խոստացաւ ընտրուելու պարագային՝ աւելի սերտ յարաբերութիւններ նշակել հայ գաղութին եւ ոստիկանապետութեան հետ:

Վերոյիշեալ հանդիպման ընթացքին խօսակցութեանց նիւթ դարձան շրջանի անդորրութիւնն ու խաղաղութիւնը յուզող եւ հայ գաղութի եւ մասնաւորաբար նորահաս երիտասարդութեան վերաբերեալ հետաքրքրական հարցեր:

Նշենք նաեւ որ յառաջիկայ Նոյեմբերի 4ի ընդհանուր ընտրութիւններուն Ճիմ ՄըքՏանըլ իր թեկնածութիւնը պիտի դնէ շուրջ 80 քաղաք հաշուող Լոս Անճելոս գաւառի Շէրիֆի (ոստիկանապետ) պաշտօնին համար:

## Հայաստանի Նոր Սահմանադրութիւնը Կը Նախատեսէ Վարչապետական Համակարգ

Հոկտեմբեր 15-ին Հայաստանի Արդարադատութեան Նախարարութեան ինթըրնէթային կայքէջին վրայ հրատարակուած սահմանադրական փոփոխութիւններու հայեցակարգով ամրագրուած է կիսանախագահական խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու անհրաժեշտութիւնը:

«Ազգային ժողովը, որպէս օրէնսդիր իշխանութիւն, վերահսկողութիւն կ'իրականացնի գործադիր իշխանութեան բարձրագոյն մարմնի՝ կառավարութեան նկատմամբ», - ըստած է հայեցակարգին մէջ:

Ըստ նախատեսուած փոփոխութիւններուն, ներկայիս գործող կառավարման համակարգին հետ համեմատած, սկզբունքորէն նոր դեր պիտի իրականացնէ Հանրապետութեան Նախագահը:

Ըստ հայեցակարգի, նախագահը պիտի ընտրուի Ազգային ժողովի կամ աւելի լայն ընտրա-

կան խմբաւորման մը կողմէ որուն մէջ կրնան ներառուիլ նաեւ ակիւնքի ներկայացուցիչները:

Սփիւռքի ներկայացուցիչներու ընդգրկումը քննարկման առարկայ պիտի դառնայ բարեփոխումներու երկրորդ փուլի ընթացքին:

Ըստ հայեցակարգի, Հանրապետութեան նախագահը պէտք չէ ունենայ վերընտրման իրաւունք, որպէսզի անոր պաշտօնավարման ընթացքին աւելի լիակատար կերպով ապահովուի անոր անկախութիւնը քաղաքական ուժերէն:

Գործադիր իշխանութեան լիազօրութիւններուն վերաբերեալ նոր հայեցակարգով վարչապետի իրաւասութիւններուն վերաբերեալ հանգամանալից անդրադարձ չկայ:

«Մենք վարչապետի լիազօրութիւններին կոնկրետ չենք անդրադարձել: Վարչապետը գլխաւորելու է կառավարութիւնը, վարչապետը լինելու է դժուար փոփո-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Համարեա Ջրից Հրդեհ Բռնկուելու Սպառնալիք

ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Եւ այսպէս, Հոկտեմբերի 10-ի պատմական օրն արդէն իրողութիւն է՝ Հայաստանը Մինսկում դարձաւ Եւրասիական Տնտեսական Միութեան անդամ, իսկ Երեւանում տեղի ունեցաւ ոչ իշխանական ուժերի հանրահաւաքը, որտեղ պաշտօնապէս ազդարարուեց քաղաքական նոր թատերաշրջանի բացումը: Հոկտեմբերի 10-ի հանրահաւաքի ամենազխաւոր առանձնայատկութիւնն, անշուշտ, ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանի ներկայութիւնն էր Ազատութեան հրապարակում:

Սա քաղաքական մարտավարութեան կտրուկ շրջադարձ էր ե՛ւ ԲՀԿ-ի, ե՛ւ նրա առաջնորդի համար, քանի որ նախկինում փողոցային պայքարը Ծառուկեանին երբեք բնորոշ չի եղել: Սակայն դատելով հանրահաւաքում հնչած «Ծառուկեան նախագահ» վանկարկումներին՝ նրան հրապարակում սպասում էին: Ինքը՝ ԲՀԿ առաջնորդը, առանձնապէս շատ բան չխոստացաւ իրեն սպասողներին. ընդամենը ողջունեց ու հաւատացեց՝ նրանց երբեք չուսախաբ չանել: «Ես այսօր այստեղ եմ, ձեզ հետ, ձեր կողքին կանգնած եմ, եւ հպարտ եմ, որ այսօր այստեղ եմ՝ ձեր կողքին: Ուզում եմ, որ դուք իմանաք՝ երբեք ու երբեք չի եղել, որ հանրութեանը, ժողովրդին յայտարարութիւն անեմ եւ իմ յայտարարութիւնից հետ կանգնեմ: Այսօր ինչ որ ձեզ ասում եմ, իմացէ՛ք, որ մինչեւ վերջ ես կատարելու եմ», - ասել է Ծառուկեանը եւ աւելացրել, թէ հիմնական ասելիքը հնչեցնելու է յաջորդ հանրահաւաքին:

Հանրահաւաքի ծրագրային ելույթը ՀԱԿ առաջնորդ, առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին է եղել: Առաջ անցնելով՝ փաստենք, որ Տէր-Պետրոսեանը

թերեւս առաջին անգամ Ազատութեան հրապարակում նախագահ բառի վանկարկումն ստիպուած էր լսել ոչ թէ Լեւոն, այլ Ծառուկեան անունով: Իսկ ինչ վերաբերում է ելույթին, որտեղ հնչեցուել է քառեակի գործունէութեան պլատֆորմը. նախ Տէր-Պետրոսեանը Քառեակի հանրահաւաքային գործընթացը հռչակել է համաժողովրդական շարժում. «Նորաստեղծ շարժումը գլխաւորում են Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը, Ժառանգութիւնը, Բարգաւաճ Հայաստանը եւ Հայ Ազգային կոնգրեսը: Շարունակելով հանդերձ մեզ հետ համագործակցութիւնը խորհրդարանական մակարդակում՝ Դաշնակցութիւնը ինչ-ինչ նկատառումներով յարմար չի համարել մաս կազմել համաժողովրդական շարժմանը, եւ մենք յարգանքով ենք վերաբերում նրա դիրքորոշմանը: Ինչեւիցէ, կարեւորն այն է, որ կազմի մասնակի փոփոխութիւնից յետոյ էլ հրաշալի Քառեակը շարունակում է մնալ նոյնքան հրաշալի Քառեակ», - ասել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Նա վերահաստատել է, որ իշխանականները աշխարհաքաղաքական կողմնորոշումների խնդիր չեն դնում. «Հայաստանի քաղաքական օրակարգում այդպիսի խնդիր գոյութիւն էլ չունի, որովհետեւ, ինչպէս նշել եմ իմ ելույթներից մէկում, Հայաստանի անդամակցումը Եւրասիական Միութեանը այլեւս անշրջելի իրողութիւն է», - յայտարարել է Տէր-Պետրոսեանը: Այսինքն՝ աշխարհաքաղաքական հարցում՝ իշխանութեան հետ ոչ մի հակասութիւն: Այսպիսով՝ միակ խնդիրը ներքին պրոբլեմներն են՝ կոռուպցիան, կաշառակերութիւնը, սոցիալ-տնտեսական վատթար իրավիճակը, արտագաղթը, սահմանադրական փոփոխութիւնները, որոնց լուծման միակ ճանապարհը

իշխանութիւնը Սերժ Սարգսեանի գլխաւորած ռեժիմից վերցնելը: Նախկինում Տէր-Պետրոսեանը շատ պարզ ու բաց տեքստով յայտարարել է, որ իշխանութիւնը, առանց ֆինանսական ռեսուրսի, հնարաւոր չէ վերցնել՝ այդ նպատակով նա առաջ քաշեց բուրժուազեմոկրատական լեղափոխութեան գաղափարը, որի իրականացմանը պէտք էր համեմատել Ծառուկեանի աջակցութեամբ: Ծառուկեանն արդէն հրապարակում է, Լեւոն Տէր-Պետրոսեանը շատ հանգիստ կարող էր յայտարարել բուրժուազեմոկրատական լեղափոխութեան երկրորդ փուլի մեկնարկի մասին: Բայց Տէր-Պետրոսեանը այդ մասին չհայտարարեց, փոխարէնը նա փորձեց մաքրել այս նոր շարժումը Քոչարեանի եւ ՕԵԿ-ի խարանից. «Հակառակ որոշ յօրինուած կասկածների ու բամբասանքների՝ Ռոբերտ Քոչարեանը եւ Օրինաց երկիր կուսակցութիւնը այս շարժման հետ որեւէ առնչութիւն չունեն: Եթէ նրանք ուզում են մեզանից անկախ կամ մեզ գուզահեռ պայքարել սարգսեանական ռեժիմի դէմ, թող պայքարեն, ոչ ոք նրանց չի խանգարում, աւելին՝ դրա համար նոյնիսկ շնորհակալ կը լինենք նրանց», - հրապարակում յայտարարել է Լեւոն Տէր-Պետրոսեանը: Առաջին նախագահն իրականում, մեղմ ասած, անկեղծ չի եղել, որովհետեւ ոչ միայն Քոչարեանը, այլեւ նոյնիսկ Սերժ Սարգսեանը կապ ունի այս շարժման հետ: Ի դէպ, հրապարակում Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթն ունկնդրող եւ նրա՝ իշխանութեան հասցէին ուղղուած քննադատութիւններին ծափահարող Ծառուկեանն ընդամենը երկու օր առաջ հրապարակաւ բաժակ էր բարձրացնում Սերժ Սարգսեանի հետ, եւ դա եթեր հեռարձակուեց գրեթէ բոլոր հեռուստաընկերութիւններով: Անգամ շատ վառ երեւակայութեան պայմաններում դժուար է հաւատալ, թէ Ծառուկեանն ուզում է իշխանութիւնը վերցնել, իսկ

Սերժ Սարգսեանը նրան յաջողութիւն էր մաղթում այդ գործում: Շատ մանրակրկիտ հաշուարկուած է ամէն ինչ. իշխանութիւնն, իհարկէ, ամենավառ երազում անգամ չէր կարող պատկերացնել, որ Հայաստանի «ընդդիմութիւնը» Ծառուկեանն է լինելու. դա Սերժ Սարգսեանի համար նոյնքան վտանգաւոր է, որքան ջրից հրդեհ բռնկուելու սպառնալիքը: Ինչ վերաբերում է Քոչարեանին, ապա գրեթէ բոլորը ԲՀԿ-ի հետեւում միշտ տեսել են նրան, իսկ եթէ առաջին նախագահը չի տեսնում, ապա դա ոչ թէ տեսողութեան, այլ ընդամենը քաղաքական նպատակայարմարութեան խնդիր է:

Ամենակարեւորը, սակայն, ոչ թէ հրապարակում հնչած ելույթներն էին, այլ հաւաքուած բազմութիւնը, որն իսկապէս տպաւորիչ էր: Կարեւոր չէ, որ հրապարակում հաւաքուածները գուցէ հերթական հրաթափութիւնն են սպրեյու (Բաֆֆի Յովհաննիսեանը գոնէ ելույթ չունեցար): Կարեւորը փաստն է, որը այս էլ քանի անգամ յստակ արձանագրուած է. Հայաստանի հասարակութիւնը դժգոհ է իշխանութիւնից, Հայաստանի հասարակութիւնը փոփոխութիւն է ուզում, Հայաստանի հասարակութիւնը պատրաստ է պայքարի: Քաղաքական էլիտան կարող է մշտապէս դաւաճանել հասարակութեանը, բայց միեւնոյնն է, ժողովուրդը անգամ բնագրաբար հասկանում է, որ հրապարակ գնալը այլընտրանք չունի. պէտք է գնալ այնքան ժամանակ, մինչեւ որ կը ձեւաւորուի ցանկալի իշխանութիւն: Հանրահաւաքի իմաստը այս գիտակցութեան արմատաւորումն էր՝ ընդամենը: Բայց պէտք է խոստովանել՝ քիչ չէ:

«ՀԱՅԵԼԻ»

Մինսկում որոշուել են Հայաստանի սահմանները

ՅԱԿՈՐԲԱՆԱԼԵԱՆ

Ղազախստանի նախագահը յայտարարել է, որ Հայաստանի Եւրասիական Միութեանն անդամակցելու հարցում եկել են փոխզիջման՝ Հայաստանի սահմանների հարցում, թէ ինչ սահմանով է Հայաստանն անդամակցում Եւրասիական Միութեանը:

Թէ ինչ կոմպրոմիսի մասին է խօսքը, եւ ում միջեւ կոմպրոմիսի, որն է կոմպրոմիսի առարկան, յայտնի չէ: Օրինակ, Հայաստանի սահմանը ճանաչելու հարցում է կոմպրոմիսը, թէ բոլորովին այլ, Հայաստանի հետ կապ չունեցող հարցում, երբ Ղազախստանը եւ Ատրպէյճանն ասենք համաձայնել են դրանից յետոյ հանել Հայաստանի անդամակցութեան սահմանների հարցը:

Երեւի թէ իրատեսական չէ սպասել, որ Հայաստանի իշխանութիւնը կը բացատրի այդ կոմպրոմիսը: Հաւանական է, որ Հայաստանի իշխանութիւնն այդ կոմպրոմիսից տեղեակ էլ չէ, կամ դեռ չի տեղեկացուել: Ի վերջոյ Հայաստանի անդամակցութեան սահմանների հարցը, կամ այլ կերպ ասած Արցախի սահմանի մաքսակետի հարցը հանդիսանում էր նաեւ Ռու-

սաստանի, Ղազախստանի, Բելառուսի եւ Ատրպէյճանի համար միմեանց հետ յարաբերութիւնների պարզաբանման առարկայ:

Օրինակ, պէտք է բացատրել, որ կոմպրոմիսը կայացել է Հայաստանի սահմանների հաշուին, Եւրամիութեան հետ Ղազախստանի գործընկերային նոր Համաձայնագրի համար, որում Նազարբաեւը ընդգծում է նաեւ անվտանգութեան բաղադրիչի ներառուածութիւնը, ինչն արմատապէս նոր որակ է Ղազախստան-Եւրասիական հանրոյթ յարաբերութեան հեռանկարում: Ընդ որում, Նազարբաեւը դրա մասին յայտարարում է Մինսկի վեհաժողովի նախօրէին Բրիւսել այցելելով եւ ամերիկեան հեղինակաւոր ամսագրում էլ յօդուած հրապարակելով:

Ամէն դէպքում, յստակ է, որ հարցը վեբերում է հենց մաքսակետին: Եւ կոմպրոմիսի արդիւնքը հաւանաբար այն է, որ այս փուլում մաքսակետի հարց չի պնդուում: Բայց այդ համաձայնութիւնն ակնյայտօրէն բանաւոր համաձայնութիւն է, այսինքն Հայաստանի անդամակցութեան պայմանագրում այդ հարցը որեւէ իրական դրոյթով չի փակուում: Հետեւաբար, կոմպրոմիսն այսօր կայ, վա-

ղը կարող է չլինել: Եւ վաղը Հայաստան-Արցախ սահմանին մաքսակետի հարցը կարող է վերստին առաջանալ:

Միեւնոյն ժամանակ, հնարաւոր է նոյնիսկ, որ Հայաստանին տրուել է ժամանակ՝ մաքսակետի հարցը լուծելու, այսինքն «հասարակութեանը նախապատրաստելու» համար: Ոչ մի կասկած չկայ, որ դա իրականանալի գաղափար է, ինչպէս որ իրականացաւ Եւրամիութեան հետ ինտեգրացիայի ճանապարհից կտրուկ շրջադարձը դէպի Եւրասիական վասալութիւնը: Այնպիսի քաղաքական համակարգի եւ դասաւորութեան պայմաններում, ինչպիսին Հայաստանում է, հնարաւոր է ամեն ինչ: Ընդամենը հեռտորական տեխնիկայի հարց է յաջորդ փուլում էլ Արցախի սահմանին մաքսակետն անշրջելի հռչակելը: Կ'օգնի նաեւ Գազպրոմին կից փորձագիտական հանրութիւնը, որն արդէն սկսել է բացատրել, թէ Արցախի անկախութեան ինչքան կարեւոր ատրիբուտ է լինելու մաքսակետը:

Աւելին, մաքսակետը հնարաւոր է հռչակել Արցախի անկախութեան հիմնադիր մաքսակետ, իսկ Արցախի անկախութեան հանրաբար,

Շաբ.ք էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏԻ ՉՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՉԱՆՃԵԱՆ
ԿԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ոչ իշխանական Եռեակի Բազմախազարանոց Հանրահալարք Երեւանի Մէջ



Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Գագիկ Ծառուկեան նոյն հարդակի վրայ՝ ընդդիմութեան հանրահալարքի ընթացքին

Ոչ իշխանական եռեակի բազմախազարանոց հանրահալարքում ամբողջական իշխանափոխութեան, Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեան մասին խօսեցին միայն Հայ Ազգային կոնգրէսի եւ «Ժառանգութեան» առաջնորդներ Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Բաֆֆի Յովհաննիսեանը: Նախօրէին նախագահ դառնալու յայտ ներկայացրած «Բարգաւաճ Հայաստան»-ի ղեկավար Գագիկ Ծառուկեանը միայն վստահեցրեց, որ լինելու են փոփոխութիւններ, ամբողջական ելոյթով, սակայն, խոստացաւ հանդէս գալ յաջորդ հանրահալարքին:

«Այն բոլոր հարցերը, ինչին դուք սպասում էք, ես ասել եմ այդ բոլորը, եւ կարող եմ այսօր մի բան ասել, որ անպայման մեր երկիրը, մեր ժողովուրդը ունենալու է մեծ յաջողութիւն: Եւ այդ յաջողութեան սկիզբը դրուում է այսօր այստեղ, այս պահին: Ուրեմն ես յայտարարում եմ, որ ես նոյնպէս պատրաստ եմ ձեզ հետ, ձեր կողքին լինելու», - իր ելոյթով ասաց ԲՀԿ առաջնորդը:

Մինչդեռ առաջին նախագահ, «Հայ Ազգային կոնգրէս»-ի ղեկավար Լեւոն Տէր-Պետրոսեանը յստակ ընդգծեց, որ պէտք է անյապաղ անցկացնել արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ:

«Սարգսեանական ռեժիմը լիովին սպառուած է, ընդ որում թէ՛ հայ ժողովրդի, թէ՛ նաեւ արտաքին աշխարհի աչքում: Նրա կառավարման իւրաքանչիւր օր կորուստ է երկրի եւ ժողովրդի համար, իսկ նրա գոյութեան երկարաձգումը՝ անխուսափելի աղէտ, որից խուսափելու միակ միջոցը շուտափոյթ եւ ամբողջական իշխանափոխութիւնն է, այսինքն՝ արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը», - նշեց ՀԱԿ առաջնորդը, - «Ինչ վերաբերում է իշխանափոխութեան իրականացման փաթեթային թէ՛ փուլային տարբերակներին կամ արտահերթ ընտրութիւնների անցկացման մեխանիզմներին, ապա այդ մասին խօսք կը լինի յաջորդ հանրահալարքում: Վարչախմբից այլեւս սպասելիք չունենալով, այստեղ եմ մենք նրան պահանջներ կամ փոխդիմումային առաջարկներ, առաւել եւս վեճազարեւելքներ կայացնելու: Մեր ծրագրերն ու նպատակները յստակ են, ուստի երկխօսութեան եւ փոխզիջումային լուծումների առաջարկները

պետք է բխեն իշխանութիւններից: Եթէ այդ առաջարկները ողջամիտ լինեն, ապա հնարաւոր է, որ դրանց ընդառնջենք, իսկ եթէ ոչ, ապա, գործող նախագահի օրինակով, դրանք կ'ուղարկենք զրոյթի ծոցը»:

Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ եռեակը այսուհետեւ դարձեալ «հրաշալի քառեակ» է, քանի որ խորհրդարանական երեք խմբակցութիւնների հետ է Ստեփան Դեմիրճեանի գլխավորած Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը:

«Ժառանգութեան» առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը միակն էր, որ Ազատութեան հրապարակի ամբիոնից անդրադարձաւ այդ օր ստորագրուած Եւրասիական Տնտեսական Միութեանը Հայաստանի անդամակցութեան պայմանագրին - «Հինգ տարի առաջ այս օրը նա ստորագրել տուեց այն արձանագրութիւնները, որոնք հակապետական էին, հակասահմանադրական, եւ շարունակութիւնն էին 21 թուականի Մոսկուայի եւ Ղարսի պայմանագրերի: Հոկտեմբերի 10-ին՝ հինգ տարի առաջ: Անցեալ տարի պետական յանցագործութեամբ նա գողացաւ ոչ թէ իմ քուէն, այլ ժողովրդի ձայնը, արհամարհելով ժողովրդի կամքը հերթական անգամ: Այսօր, առանց որեւէ լեգիտիմութեան կան իրաւակարգութեան, առոչինչ իր ստորագրութիւնը դրեց մի փաստաթղթի վրայ, որը վաճառում է Հայաստանի անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը: Իր ցանկացած քայլ՝ արտաքին, թէ ներքին, առոչինչ է, եւ ժողովուրդը չի ընդունում»:

Ի դէպ, Բաֆֆի Յովհաննիսեանը իշխանափոխութեան մասին խօսելիս ստիպուած եղաւ «Հիմա, հիմա» վանկարկումների ներքոյ ընդհատել ելոյթը: Արձագանքելով դրանց՝ «Ժառանգութեան» առաջնորդը ասաց, թէ ցանկանում է հետագայ քայլերի մասին մի քանի ռոպէ խորհրդակցել Լեւոն-Տէր Պետրոսեանի եւ Գագիկ Ծառուկեանի հետ: Սակայն մինչ Բաֆֆի Յովհաննիսեանը կը մօտենար գործընկերներին, հանրահալարք վարող ԲՀԿ պատգամաւոր Տիգրան Ուրիխանեանը յայտարարեց յաջորդ ելոյթի մասին: «Ժառանգութիւն» կուսակցութեան ղեկավարը այդպէս էլ հնարաւորութիւն չունեցաւ շարունակել ելոյթը եւ պատմել, թէ ինչ քննարկեց Ծառուկեանի ու Տէր-Պետրոսեանի հետ:

Պ. Մակեան «Մարտի 1-ի Իրականացնողները Եւ Տուժողները Նոյն Հարթակում Էին»

Եռեակ կոչուածը սպասարկում է Հայաստանի երկրորդ նախագահ Քոչարեանի շահերին եւ աջ ձեռքը չգիտի, թէ ձախն ինչ է անում, ձախը չգիտի, թէ աջն ինչ է անում: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակեանը: Նա նշեց, որ Հոկտեմբերի 10-ին, երբ պէտք է քննարկուէր ՀՀ-ի ԵՏՄ-ին անդամակցելու հարցը, հանրահալարք անցկացնելը դրսից ուղղորդուած որոշում էր, եւ այս ամէնի կողքին հանրահալարքում հնչած ամպագոռգոռ յայտարարութիւնները տեղ չունեն:

Հարցին, թէ որպէս Լեւոն Տէր-Պետրոսեանի մի ժամանակուայ դաշնակից՝ կը պատկերացնէի՞ք, որ նա Գագիկ Ծառուկեանի հետ կը կանգնէր մի հարթակում, Պետրոս Մակեանն այսպէս արձագանքեց. «Երբ 1996թ լինելով իշխանութեան մէջ, տարանջատուեցինք այն ժամանակ Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութիւնից եւ դարձանք ընդդիմութիւն, այնուհետեւ անձամբ ես չէի մտածում, որ հնարաւոր է ճանապարհ գնալ նրա հետ: Լեւոն Տէր-Պետրոսեանը անկանխատեսելի է եւ 2008թ մենք դաշինք կազմեցինք: Ունենալով կառավարման համակարգի շուրջ տարակարծութիւններ, նրան պաշտպանեցինք՝ տեսնելով որ այլընտրանքը այդ պահին ինքն էր: Լեւոն Տէր-Պետրոսեանն այնքան անկանխատեսելի էր, որ 2011թ հրաժարուեց այդ հօգը շարժումից եւ ուղղութիւն վերցրեց իր խօսքով



«Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակեան

դէպի բուրժուադեմոկրատական յեղափոխութիւն՝ սպասարկելով օլիգարխիային: Ինչքան էլ զարմանալի լինի, Հայաստանում զարմանք հասկացութիւն այլեւս չի գործում», - ասաց նա:

Դիտարկմանը, թէ ինչպէս կարող է ՀԱԿ-ը սպասարկել Ռոբերդ Քոչարեանի շահերը, հաշուի առնելով, որ նրանք Մարտի 1-ի գլխավորաբար մեղաւոր համարում են հենց երկրորդ նախագահին, Պետրոս Մակեանը նկատեց, որ եռեակը սպասարկում է նաեւ Սերժ Սարգսեանին, ուղղակի այս փուլում աւելի շատ կարծես թէ Քոչարեանի ընտանիքի շահերն է սպասարկում: «Հոկտեմբերի 10-ին Մարտի 1-ի իրականացնողները եւ տուժողները նոյն հարթակում էին, դա արդէն մարդկային արժէքների, բարոյականութեան խնդիր է:

«Ժառանգութիւնը» Եռյակից դուրս չի գալիս. Արմէն Մարտիրոսեան

«Ժառանգութեան» եռեակը լքելու խնդիր չկայ դրուած: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց «Ժառանգութեան» փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:

Նա շեշտեց, որ «Ժառանգութիւնում» քննարկումներ յաճախակի են լինում, այս փուլում՝ առաւել յաճախ: Արմէն Մարտիրոսեանը շեշտեց, որ քննարկումները բաց են, եւ «Ժառանգութիւնում» ոեւէ մէկը իր տեսակէտը արտայայտելու հետ կապուած խոչընդոտ չունի: «Նմանատիպ բան չկայ, թէ մենք դուրս ենք գալիս եռեակից», - ասաց «Ժառանգութեան» փոխնախագահը: Նշեց, որ «Իրաւունք» թերթը գրել էր, թէ ըստ «Ժառանգութեանը» մօտ

կանգնած աղբիւրի, տեղի են ունեցել բուռն քննարկումներ, թէ ինչքանով է նպատակայարմար շարունակել համագործակցութիւնը «եռեակի» հետ այն բանից յետոյ, որ Բաֆֆի Յովհաննիսեանին փաստացի նուաստացրել են հանրահալարքի ժամանակ:

«Ժառանգութեան» որոշ ներկայացուցիչներ ձգտելով իրենց առաջնորդին համոզել, որ հարկ է անյապաղ լքել «եռեակը», դա անում էին բաւական կրքոտ, ձեռքներին թափահարելով ԶԼՄ-ների այն հրապարակումները, ուր ցցուած էր այդ նուաստացման պահը: Սակայն Բաֆֆին յետաձգել է վճիռ կայացնելը, նշելով, որ ամսի 13-ը այդպիսի կարեւոր գործերի համար այնքան էլ յարմար չէ», - գրել է թերթը:

ՀՀԿ-ական Պատգամաւորի Կարծիքով Եռեակի Հանրահալարքին 5 Հազար Մարդ Է Մասնակցել

Խորհրդարանական ոչ իշխանական երեք ուժերի՝ ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի եւ «Ժառանգութեան»՝ հոկտեմբերի 10-ին կազմակերպած համատեղ համապետական հանրահալարքը բազմամարդ չի եղել: Այս մասին այսօր՝ հոկտեմբերի 14-ին, լրագրողներին հետ զրոյցում ասաց ԱԺ ՀՀԿ խմբակցութեան քարտուղար Գագիկ Մելիքեանը:

«Ազատութեան հրապարակում եղել է 5-6 հազար մարդ, իսկ իրենք խօսում են 50 հազարի մասին: Այս մարդիկ պարզապէս շփոթմունքի մէջ են եւ յուսախաբ են: Հոկտեմբերի 10-ին, երբ ստորագրուեց ԵՏՄ-ին միանալու պայմանագիրը, Ազատութեան հրապարակում տպա-

ւորութիւն էր, որ ուժերի ներկայացուցիչները չգիտէին՝ ինչ ասել, որոնք են իրենց նպատակները: Դրանից էլ ժողովուրդն էլ յուսախաբ եղաւ», - ասաց Գագիկ Մելիքեանը:

ՀՀԿ-ական պատգամաւորը համոզուած է, որ «Հայոց արծիւներ» հասարակական կազմակերպութիւնը միայնակ աւելի շատ մարդ կարող է հաւաքել, քան եռեակի երեք ուժերը միասին:

«Իսկ եռեակն էլ միասնական դիրքորոշում չունի, դա յստակ երեւաց առաջնորդների ելոյթներում», - նշեց Գագիկ Մելիքեանը:

Նշեց, որ եռեակի համատեղ համապետական հանրահալարք տեղի է ունեցել հոկտեմբերի 10-ին:

# ԼՈՒՐԵՐ

## «Բարուն Տարբեր Հանդիպումներից Առաջ Պարբերաբար Սրում Է Իրավիճակը»

Կարելի է միանշանակ ասել, որ Ղարաբաղի շուրջ լարուածութիւն է տիրում տարբեր մակարդակի հանդիպումներից առաջ, այդ հանդիպումների ժամանակ կամ դրանցից յետոյ: Այս մասին Հոկտեմբերի 14-ին Ֆրանսիական համալսարան այցի ժամանակ յայտարարել է ՀՀ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը՝ անդրադառնալով ադրբեջանական կողմից վերջին օրերին հրադարձարի ռեժիմի խախտման յաճախականացմանը:

Ըստ նախարարի՝ հայկական կողմը համապատասխան տուեալներ ունի, որ առաջնային գծում հակառակորդի դիպուկահարներ կան, որոնք խախտում են հրադարձարի ռեժիմը:

«Մենք պէտք է հասկանանք, որ գործ ունենք հարեւանի հետ, որը մինչեւ վերջ էլ զիտակցում, որ հակամարտութեան կարգաւորման միակ ուղին դիւանագիտական խաղաղ ճանապարհն է: Եւ վստահութեան եւ երկխօսութեան միջոցով ստեղծելու փոխարէն Ադրբեջանը պարբերաբար սրում է իրավիճակը: Մեզ համար յատկապէս անընդունելի է այն, որ իրավիճակը սրում է Հայաստանի հետ սահմանին, քանի որ հիմնական հակամարտութիւնը Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի միջեւ է»:



ՀՀ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեան

- ընդգծել է Սեյրան Օհանեանը: Նշենք, որ նորից յաճախակիացել են Հայաստանի սահմանին հրադարձարի ռեժիմի խախտման դէպքերը: Հոկտեմբերի 14-ի առաւօտեանից հակառակորդը մի քանի անգամ կրակ է բացել Չինարի գիւղի ուղղութեամբ: Մէկ օր առաջ գնդակոծութեան է ենթարկուել Այգեպար գիւղը:

Բացի դրանից, ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի ՁՈՒ շփման գծին ադրբեջանական կողմից անկանոն կրակոցների հետեւանքով վիրաւորուել է մէկ հայ զինուոր:

## Ինչ Օգուտ Ունի Գիւմրին Ռուսական Ռազմաբազայից՝ Հարցրել Է Ֆրանսիացի Դիւանագետը

ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Անրի Ռենոյի հետ աշխատանքային այցով Գիւմրի այցելած՝ Ֆրանսիայի ԱԳՆ ներկայացուցիչ էրիկ Ֆուրնիէն այսօր՝ Հոկտեմբերի 14-ին, մարզպետ Ֆելիքս Յոլակեանի հետ հանդիպմանը հետաքրքրուել է, թէ Գյումրիում տեղակայուած ռուսական 102-րդ ռազմաբազան ինչով նպաստում է Գյումրի քաղաքի խնդիրների լուծմանը:



Էրիկ Ֆուրնիէի հանդիպումը Մարզպետ Ֆելիքս Յոլակեանի հետ

NEWS.am-ի թղթակցի փոխանցմամբ, Շիրակի մարզպետ Ֆելիքս Յոլակեանը պատասխանեց, որ տեղի բնակիչների կենսակերպի վրայ ռազմաբազան առանձնակի ազդեցութիւն չունի:

«Ռուս զինուորականներն ապրում են հստակ իրենց ընտանիքներով, սպայական անձնակազմն հստակ ապրում է այնպէս, ինչպէս քաղաքի բնակչութիւնը, առանձնակի որեւէ բան մենք չենք զգում»,- ասաց Շիրակի մարզպետ Ֆելիքս Յոլակեանը:

Լրագրողների հարցին, թէ որն էր ռուսական ռազմաբազայով հետաքրքրուելու պատճառը, Ֆրանսիայի ԱԳՆ ներկայացուցիչը պատասխանել է. «Մեր խօսակցութեան մեխը, կարեւոր առանցքն այն է, թէ ինչ միջոցներով է Գիւմրի քաղաքն իր կենսագործունէութեան համար անհրաժեշտ պայմանները հայթայթում: Դրա համար էլ հարց տուցի ռուսական

բազայի հետ կապուած, որովհետեւ եթէ ասում ենք՝ բազա, դա նաեւ, բնականաբար, ձեռնարկութիւն է, եթէ եկել, հաստատուել է, ուզում էի պարզապէս հետաքրքրուել, թէ արդեօք իր առկայութեամբ տնտեսական առումով ինչ-որ մի առաւելութիւն կամ օգնութիւն կարող է բերել քաղաքին, ես ի նկատի ունեմ աշխատատեղեր, զբաղուածութիւն»:

Նշենք, որ էրիկ Ֆուրնիէն Շիրակի մարզպետի հետ քննարկել է մարզի խնդիրները եւ համագործակցութեան հնարաւորութիւնները, մասնաւորապէս, բնակչութեան գործազրկութեան կրճատման հարցում:

«Այցիս նպատակներից մէկն էլ դա էր, որ փորձենք հասկանալ, թէ ինչ ոլորտներում կարող ենք համագործակցել, վստահ եմ, որ մեր համագործակցութիւնը դրական ազդեցութիւն կունենայ թէ Գիւմրիի, թէ մեզ համար»- ասաց Ֆրանսիայի ԱԳՆ ներկայացուցիչը:

## Սերբիայի Նախագահ Տոմիսլաւ Նիկոլիչի Պաշտօնական Այցը Հայաստան



Սերբիայի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարները կ'ստորագրեն փաստաթուղթերը, մինչ երկու երկիրներում նախագահները կ'անգնան

ՀՀ նախագահի նստավայրում կայացել են նախագահ Սերժ Սարգսեանի եւ պաշտօնական այցով Հայաստանի Հանրապետութիւնում գտնուող Սերբիայի Հանրապետութեան նախագահ Տոմիսլաւ Նիկոլիչի ընդլայնուած կազմով բանակցութիւնները՝ երկու երկրների պաշտօնական պատուիրակութիւնների մասնակցութեամբ: Բանակցութիւններից յետոյ տեղի է ունեցել երկու երկրների միջեւ համագործակցութեան զարգացմանն ու խորացմանն ուղղուած փաստաթղթերի ստորագրման արարողութիւն: Մասնաւորապէս, ստորագրուել են՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Սերբիայի Հանրապետութեան կառավարութեան միջեւ տնտեսական, գիտական եւ տեխնիկական համագործակցութեան մասին համաձայնագիր եւ Հայաստանի Հանրապետութեան էկոնոմիկայի նախարարութեան եւ Սերբիայի Հան-

րապետութեան առևտրի, զբօսաշրջութեան եւ հեռահաղորդակցութեան նախարարութեան միջեւ զբօսաշրջութեան բնագաւառում համագործակցութեան մասին փոխըմբռնման յուշագիր:

Նախագահներ Սերժ Սարգսեանը եւ Տոմիսլաւ Նիկոլիչն այնուհետ հանդիպման արդիւնքներն ամփոփել են զանգուածային լրատուամիջոցների ներկայացուցիչների առջեւ յայտարարութեամբ:

Նախագահ Սերժ Սարգսեանի անունից՝ ի պատիւ պաշտօնական այցով Հայաստանի Հանրապետութիւնում գտնուող Սերբիայի նախագահ Տոմիսլաւ Նիկոլիչի, նախագահի նստավայրում տրուել է պաշտօնական ճաշ:

Սերբիայի նախագահը այցելել է նաեւ Միծեռնակաբերդի յուշահամալիր՝ ծաղկեպսակ դրել Հայոց մեծ եղբունի զոհերի յուշարձանին եւ յարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի յիշատակին:

## ՀՀ անդամակցութիւնը ԵՏՄ-ին չի խոչընդոտում ԵՄ հետ յարաբերութիւններին

Եւրասիական Տնտեսական Միութեանը Հայաստանի անդամակցութեան համաձայնագիրը խոչընդոտ չի հանդիսանում ԵՄ հետ հետագայ յարաբերութիւնների կառուցման համար: Այդ մասին լրագրողներին յայտարարել է Հայաստանում ԵՄ դեսպան Տրաեան չրիսթեան:

Նրա խօսքով՝ կողմերն աշխատելու են իրաւական գործիքների շուրջ ապագայ երկկողմանի յարաբերութիւնների համար: «Այնպէս

որ չեմ կարծում, թէ դա խոչընդոտ կը լինի»,- յայտարարել է դեսպանը:

Նա նշել է, որ աւելի յստակ տեղեկութեան համար հարկաւոր է դիմել նաեւ իշխանութիւններին: «Մենք հայկական իշխանութիւնների հետ սեկտորային համագործակցութեան ոլորտների որոշման գործընթացում ենք: Քանի որ միւսները համաձայնեցուել են վիրնչուսում»,- յայտարարել է չրիսթեան:

## Հայաստանի Նոր Սահմանադրութիւնը

Շարունակուած էջ 1-էն

խելի, դրա համար նախատեսուած է այսպէս կոչուած կոնստրուկտիւ անվստահութեան քուէն, որի իմաստը կայանում է նրանում, որ վարչապետին կարելի է փոխարինել միայն այն ժամանակ, երբ միաժամանակ հնարաւոր է ընտրել նոր վարչապետ: Իսկ վարչապետի լիազօրութիւնները պառլամենտական

համակարգում գրեթէ տիպական են եւ մեծ առանձնայատկութիւններ չկան: Վարչապետը եւ «տէժուրէ», եւ «տէժակոս» գլխաւորելու է կառավարութիւնը եւ խաղալու է առաջին քաղաքական ջութակի դերը»,- «Ազատութիւն» ռատիոկայանին պարզաբանած է Սահմանադրական Յանձնաժողովի անդամ եւ սահմանադրագէտ Վարդան Պողոսեան:

Save Support Sustain  
 Syrian Armenian Relief Fund  
 P. O. Box 1948  
 Glendale, CA 91206-1948  
 www.syrianarmenianreliefund.org

### ՔՐՊԱՆԻ ԳԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ՝ ՈՉ ՄԵԿ ՅԱՌԱՋԻՄԱՐԱՅՔ



Քիւրտ գինեալներ մեծ դժուարութեամբ կը զսպեն Քոպանի կամ Այն էլ-Արապ քաղաքը պաշարած «Իսլամական Պետութիւն» գինեալ կազմակերպութեան յարձակումները: Քիւրտերուն սակայն օգնութեան կը հասնին Միացեալ Նահանգներու առաջնորդած Դաշնակից ուժերը, որոնք կը շարունակեն օդուժի կործանիչներով հարուածել «Իսլամական Պետութիւն» խմբաւորման դիրքերը: Երէկուան յարձակումները կեդրոնացած էին յատկապէս քրտական Քոպանիի հարաւային հատուածին մէջ գտնուող գինեալներուն դիրքերուն վրայ:

«Միլիիթ».

«Իսլամական Պետութեան» զինեալները փորձած են մտնել Թուրքիա

«Իսլամական Պետութիւն» ծայրաջեղական խմբաւորման գինեալները Սուրիոյ Քոպանի քաղաքի տարածքէն ներթափանցած են Թուրքիա: Ըստ թրքական «Միլիիթ» թերթի կայքին, իսլամիստ ահաբեկիչներ նկատուած են Թուրք-սուրիական սահմանի ակնապատուած տարածքին վրայ: Ասիկա առաջին դէպքն է, երբ «Իսլամական Պետութեան» գինեալներ բացայայտուին կը փորձեն հատել Թուրք-սուրիական սահմանն ու անցնել Թուրքիա:

Հակադարձելով այս ներթափանցման փորձերուն, թրքական բանակի կողմէ ձեռնարկուած պատասխան քայլերու մասին մանրամասնութիւններ չեն հաղորդուած:

Մինչ Քոպանիի մէջ կատարի բախումները կը շարունակուին քիւրտ գինեալներու եւ «Իսլամական Պետութիւն» խմբաւորման ահաբեկիչներուն միջեւ, տարօրինակ իրադարձութիւն մը արձանագրուած է, երբ Թուրքիոյ օդուժը երկու տարի դադարէ ետք, Կիրակի օր

յարձակումներ կատարած են Քիւրտիստանի Աշխատաւորական կուսակցութեան թիրախներու դէմ, երկրի հարաւ-արեւելեան սահմանամերձ շրջաններուն մէջ: Թրքական մամուլը կը հաստատէ, որ օդային հարուածները, «էական վնասներ հասցուցած են ՔԱԿԻ թիրախներուն, որոնք հակադարձութիւն էին քրտական ուժերու կողմէ իրաքեան սահմանամերձ Հաքքարի նահանգի ռազմական կեդրոնի ռմբակոծման, երեք օր շարունակ»:

Այս գծով Թուրքիոյ վարչապետ Ահմատ Տաւուտօղլու յայտարարեց որ «Մենք պէտք է ձեռնարկենք շարք մը քայլեր՝ պահպանելու համար ազգային անվտանգութիւնը», աւելցնելով, որ Թուրքիան Քոպանիէն ընդունած է 200 հազար քիւրտ փախստականներ՝ առանց որեւէ հարցադրումներու. «Անոնք ձեզի չէին դիմած, ով սադրիչներ, այլ ապաստանած էին Թուրքիոյ դրօշի ստուերին տակ»: Տաւուտօղլու վերահաստատած էր նաեւ որ «Թուրքիա կը մնայ ՏԱՀԷՇԻ եւ Պաշտապ Ասատի դէմ»:

Առ այդ՝ Իրանի Իսլամական հանրապետութեան արտաքին գործոց փոխ նախարար Հիւսէյն Ամիր Ապտըլ Հահան հակադարձեց Սէնտաական Արաբիոյ այն վերադրումներուն ըստ որոնց Իրանեան ուժեր պէտք է արագօրէն հեռանան Սուրիայէն որպէսզի կարելի ըլլայ կարգաւորել Սուրիական տագնապը:

Ապտըլ Հահան նաեւ ըսաւ, թէ Իրան չըջանին մէջ այն մեծագոյն երկիրն է որ կ'օժանդակէ Սուրիոյ եւ Իրաքի ժողովուրդին ու կառավարութիւններուն որպէսզի վերջիններս պաշարին ահաբեկչութեան դէմ: Ապտըլ Հահան խորհուրդ տուաւ Սէնտական Արաբիոյ ղեկավարներուն, որ զոյգ ըլլան բոլոր այն կողմերուն հանդէպ որոնք դաւեր կը նիւթեն ամբողջ շրջանին դէմ:

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ՓԱՐԻԶՈՒՄ՝ 2015-Ի ԱՊՐԻԼԻՆ



Փարիզի Բաղաձայնի գրասենեակի ներկայացուցիչը ծանօթանում է Հայոց ցեղասպանութեան առնչուող իրերի հետ

Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը հիւրընկալեց Փարիզի քաղաքապետի գրասենեակի ներկայացուցիչ՝ պարոն Ժան Իվ Կամիլին:

Ժան Իվ Կամիլին Երեւան է ժամանել ծանօթանալու համար յաջորդ տարի Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի կապակցութեամբ Փարիզի քաղաքապետարանի եւ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի հետ համատեղ կազմակերպուելիք ցուցադրութեան ցուցանմուշների հետ, որոնք ներկայացուցուցին եւ Փարիզի քաղաքապետարանի ցուցասրահներում:

Փարիզի քաղաքապետի գրասենեակի ներկայացուցիչը պարոն Ժան Իվ Կամիլին եւ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը քննարկեցին համատեղ ցուցադրութեան կազմակերպման առնչուող մի շարք հարցեր:

Ժան Իվ Կամիլին նշեց, որ, Փարիզի նախկին քաղաքապետ Բերտրան Դեյանոնէն եւ նրա իրաւաջորդը՝ Աննա Իդալգոն, որոշում են կայացրել, որ Փարիզի քաղաքապետարանը կը հիւրընկալի Հայոց ցեղասպանութեան պատմութեանն ու յիշողութեանը նուիրուած ցուցադրութիւն: Ցուցադրութիւնը կը բացուի 2015 թուականի Ապրիլին: Ցուցադրութիւնը կ'ընդգրկի ցուցանմուշներ եւ փաստաթղթեր, որոնք կը տրամադրի Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը: Իրականացում է սերտ համագործակցութիւն թանգարան-ինստիտուտի

հետ:

ՀՅԹԻ տնօրէնը՝ Հայկ Դեմոյեանը խիստ կարեւորեց նման ցուցադրութեան կազմակերպումը Ֆրանսայի մայրաքաղաքում: Նշեց, որ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը վերջին մէկ տարուայ ընթացքում զգալի աշխատանք է տարել այս ցուցադրութեան նախապատրաստման ուղղութեամբ եւ իր պատրաստակամութիւնն է յայտնել բացառիկ ցուցանմուշներ տրամադրելու եւ ցուցադրութիւնը յաւուր պատշաճի կազմակերպելու համար:

«Այս ցուցադրութիւնը բացառիկ է ինչու եւ մասշաբներով, եւ ներկայացուցչութեամբ: Այն կապուած է ինչու Հայոց ցեղասպանութեան, Առաջին աշխարհամարտի եւ Իհարկէ, հայ-ֆրանսական յիշողութեան ու պատմութեան հետ», - մատնանշեց Հայկ Դեմոյեանը:

Փարիզի քաղաքապետի գրասենեակի ներկայացուցիչը եղաւ նաեւ Հայոց ցեղասպանութեան թանգարանի ժամանակաւոր ցուցադրութիւնների սրահում, ծանօթացաւ Հայոց ցեղասպանութեան մասին պատմող ժամանակաւոր ցուցադրութեան հետ:

Տեղեկացնելով, որ ս.թ. Հոկտեմբերի 1-ին Փարիզի քաղաքային խորհրդում միաձայն ընդունուել է 2015 թուականին Փարիզում Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած չիտառակի, տեղեկատուական եւ ժխտողականութեան դէմ ուղղուած միջոցառումներ անցկացնելու մասին Փարիզի քաղաքապետարանի ուղերձը:

### Հայ Որբերու Գորգը Պիտի Ցուցադրուի

Շաբու նախուած էջ 1-էն

Ֆրանսացիներու կողմէ նախագահ Հուվըրին նուիրուած վազ մը, որպէս շնորհակալութիւն առաջին համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին ֆրանսացի երեխաներուն կերակրելուն համար եւ միւսը, 2010-ին նախագահ Օպամային ձափոնացիներու կողմէ նուիրուած փլասթիք տերեւներով ծաղ-

կեփունջ մը, որպէս երախտագիտութիւն ձափոնի մէջ տեղի ունեցած երկրաշարժին եւ ցունամիին առիւտ ցուցաբերուած ամերիկեան օգնութեան համար:

Մպիտակ Տան Ացբերներու Կեդրոնը կը գտուի 1450 Փենսիլվանիա պողոտայի վրայ, Ուաշինկթընի մէջ: Մուտքը ազատ է եւ հանրութեան առջեւ բաց է ամէն օր առաւօտեան ժամ 7:30-էն. Կ.Ե Ժամը 4-ը:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծախառնակներու և մանուկներու Քայրոփորքի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, բոցային և մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետևանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

# ՔՈՊԱՆԻ ԿԱՍ Ո՞Վ ՊԻՏԻ ՎՃԱՐԷ ՔՐՏԱԿԱՆ ԱՐԵԱՆ ԴԻՄԱՑ

## ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Ինչ որ կը կատարուի Քոպանի մէջ, կարեւոր ազդեցութիւններ պիտի ունենայ ոչ միայն սուրիական պատերազմի յառաջիկայ զարգացումներուն, այլ յատկապէս մինչեւ հիմա Սուրիոյ պատերազմին հանգիստ աչքերով դիտող թուրքիոյ վրայ: ISIS, Քոպանին գրաւելով, ոչ միայն նպատակ ունի թուրքիոյ հետ սահմանային շրջան ապահովել, այլ նաեւ քիւրտները հարուածել: Այստեղ է, որ ISIS-ի եւ թուրքիոյ շահերը կը յայտնուին նոյն կէտին վրայ: Միտումնաւոր կամ՝ ոչ, արդէն երկրորդական է: Փաստ է նաեւ, որ թուրքիա բնաւ անհանգիստ չէ (բացի ձեւական յայտարարութիւններէն) իր սահմաններուն ISIS-ի մօտենալէն: Թուրքիոյ իշխանութիւնները լաւ գիտեն, որ քիւրտներու հետ կատարուածը եւ իրենց պահուածքը մերուրի պարսը խառնելու կը նմանի, ու ամէն օր նոր ծաւալներու հասնող բողոքի գործողութիւնները կրնան հասնիլ մինչեւ եւրոպական տարբեր մայրաքաղաքներ:

Թուրքիոյ մէջ տեղի ունեցած բողոքի գործողութիւնները նոր գունաւորում ստացան, երբ շաբաթ մը առաջ քիւրտներու մայրաքաղաք համարուող Տիարպէքիւրի մէջ մարդիկ արթննալով ակնատես եղան թրքական բանակի հրասայլերու տեղաշարժին: Եղածը կը չի շեցնէր 1980-ին կատարուած զինուորական յեղաշրջումը եւ գոհերուն թիւը զգալի աճ կ'արձանագրէր:

Ի՞նչ կ'ուզեն քիւրտները: Անոնք կը պահանջեն զինամթերք եւ ճանապարհ: Անոնց համար կարեւոր է նաեւ, որ թուրքիա իր բանակային ուժերը Քոպանի ուղղակի սակայն այդ ընտրանքին բացակայութեան դիմաց անոնք կը պահանջեն ճանապարհ եւ նպատակ դրած են իրենց ակռաները ցոյց տալ ISIS-ին: Հրոսակային պատերազմներու մէջ վարժ քիւրտներուն համար այս մէկը ոսկի առիթ է ISIS-ին ուժեղ ապտակ մը տալու համար: Մինչեւ հիմա սուրիական պատերազմին մէջ շատ «խեղցիկ» վարուած քիւրտներուն համար բոլոր դիմակները այրած են: Պատերազմի առաջին օրէն անոնք Ասատի վարչակարգին դէմ չեղան: Չեղան նաեւ այդ ընթացքին հետ: Անոնք բացառապէս կերպով ըսած էին՝ «կրակը մեզմէ հեռու պահեցէք» եւ հիմա, երբ

արդէն դանակը հասած է ոսկորին, պատրաստ են կրակին դէմ դնելու: Սուրիոյ պատերազմին առնթեր ISIS-ի ունեցած ազդեցութիւնը ամէն օր կը շեշտուի: Ու միամտութիւն է կարծել, որ ISIS սոսկ մանրամասնութիւն մըն է: Շաբաթներ առաջ, երբ ԱՄՆ-ի թիւ մէկ ղեկավարը ազդարարեց ISIS-ի դէմ սկսելիք «պատերազմ»ին մասին, բոլորը կը կարծէին, որ քանի մը շաբաթէն այդ խմբաւորումը պիտի կքի օդային ծանր հարուածներուն տակ: Բայց կռիւներու ընթացքը ատոր մասին չի խօսիր: ISIS բոլորին ուշադրութիւնը անուղղակիօրէն շեղելով կը բանար Քոպանիի ճակատը:

ISIS կրնայ ստիպել, որ ԱՄՆ-թուրքիա յարաբերութեանց մէջ որոշ «բաց»եր երեւին կամ նոյնիսկ գրգռելով իրան-թուրքիա «սառած» ճակատումը օգտուիլ ստեղծուած իրավիճակէն:

Վերադառնալով թուրքիոյ մօտեցումին՝ պէտք է նշարել, որ էրտողան բաց աչքերով հաշիւը կ'ընէ թուրքիոյ մէջ առկայ «քնացած» իսլամիստ բռնիներուն ու այդ հաշիւներէն մեկնելով մինչեւ այս պահը ISIS-ի մասին խօսելու պահուն նիւթը կը շեղէ եւ կը խօսի ասատեան վարչակարգին մասին: Տակաւին մէջտեղ կը նետուի թուրքիա-Սուրիա սահմանային գօտիին վրայ առանձնացած ապահովական գօտի ստեղծելու մասին: Այսպէս էրտողան նաեւ կը ցանկայ, որ զինուորական ցամաքային որեւէ միջամտութիւն նոյնպէս թիրախ ընտրէ ասատեան վարչակարգը: Թուրքիոյ համար ասատեան վարչակարգը հիմնական թիրախ է ու այդ կեցուածքին համար էրտողան եւ իր իշխանախումբը բնականաբար կարեւոր խոստումներ ստացած են: Սուրիական տագնապին առաջին օրէն թուրքիա իր մօտեցումը չէ փոխած ու սիւննի արաբական աշխարհին հետ իր այս կեցուածքով նոյնիսկ ոչ կ'ըսէ Ամերիկեան բոլոր տեսակի խուսանալու միջոցներուն: Իր կարգին ԱՄՆ, որ կը փորձէ ամէն գնով նոր հարթակի տանիլ տագնապը, վճռելով նաեւ, որ ամերիկացի ոչ մէկ զինուոր ոտք պիտի դնէ սուրիական հողերու վրայ: Օպամա այս կերպ նաեւ կը տիրանայ ամերիկեան հանրային կարծիքին համբերատար մօտեցումին եւ «զմայլանք»ին: «Ոչ մէկ ամերիկացի գոհ կուտանք, բայց Սուրիան հրոյ ճարակ կը դարձնենք» ըսել կ'ուզէ Օպամա, մոռնա-



19-ամեայ Զէյլան Օզալը

լով որ օդային գրոհները չեն կրնար մահացու հարուած տալ ISIS-ին, որ ամէն օր թաքթիքային նոր միջոցներով կը դիմակալէ այս գրոհներուն: Օրինակ, ըստ վերջին տուեալներուն, ISIS-ի զինեալները մոթոսաիքլէթներով կը փոխադրուին ու նոյն կերպ զինամթերք կը փոխադրեն:

ԱՄՆ թուրքիոյ դիմաց դրած է մէկ կարեւոր պայման, որն է՝ խօսակցութիւն ստեղծել Ասատի իշխանութեան հետ կամ առնուազն լուել եւ աշխատանք տանիլ նոր էջ մը բանալ վարչակարգին հետ եւ ատոր փոխարէն քիւրտներու հարցը կրնայ կարգաւորուիլ: Այսպէս 10 տարիէ ի վեր ընթացող թուրք-քիւրտ բանակցութիւնները կրնան փոշիանալ, այդպիսով վերջնականապէս կտրելով կողմերուն միջեւ ստեղծուած վատհալութեան շատ բարակ կարմիր թելը:

ԱՄՆ նաեւ յայտարարած է, որ Քոպանիի պատերազմը իրենց համար առաջնահերթութիւն չէ: Այսինքն ոչ մէկ խնդիր, եթէ նոյնիսկ Քոպանիի մէջ ջարդեր իրականացուին, որոնց մասին նոյնպէս կը յուշեն ՄԱԿ-ի գերագոյն ղեկավարները Քոպանիի վիճակը համեմատելով Պոսնիոյ Սրբերէնիցա քաղաքին հետ, ուր 1995-ին տեղի ունեցած են սոսկալի ջարդեր: Օպամա եւ իր նմանները զգալի ջարդերու մասին կը չի շեշտէ միայն տարիներ անց այդպիսով «սրտառուչ» դարձնելով իրենց ճառերը:

Այս իրավիճակներուն դիմաց պէտք է նաեւ նկատել, որ Եգիպտոսի ու թուրքիոյ որդեգրած կեցուածքները ԱՄՆ-ին կը յուշեն, որ ան Միջին Արեւելքի մէջ առաջնական կայուն ուստիականները չունի:

Վերադառնալով Քոպանիին՝ պէտք է նաեւ դիտարկել քիւրտներու ցուցաբերած հերոսական կեցուածքը: Այդ հերոսական սիրանքներուն ամէնէն ընդգծելին 19-ամեայ Զէյլան Օզալի դէպքն է, ուր քրտուհին մինչեւ վերջին կապարը պայքարել է ISIS-ի զին-

եալներուն դէմ դնելու ու իր 5 ընկերուհիները կորսնցնելէ ետք «խիղճի փամփուշտ»ը իր գրպանէն հանելով ինքզինք կը սպաննէր: Օզալը շաբաթ մը առաջ խօսած էր BBC-ին եւ ըսած. «Երբ ISIS-ի զինեալները քիւրտ կիներու մօտ գէնք կը տեսնեն կը սարսափին: Մեր մէկ կինը անոնց հարիւրի դէմն է»: Դէպքը կը խօսի այլ որակներու մասին: Ու զինեալ պայքարի տարբեր բովերէն անցած քիւրտ կին զինուորի մը համար աւելի հեշտ է ինքզինք սպաննել, քան թէ ISIS-ի ողորմութեան տակ մնալ...

Ոչ մէկ խօսք այս հերոսական արարքին դիմաց, չնայած անոր, որ միջազգային քաղաքական շահարկումներուն կշիռքին վրայ այս հերոսական սիրանքները ոչ մէկ արժէք կը ներկայացնեն:

Քոպանիի վէրքը տաք է: Վերջին տեղեկութիւնները կը յուշեն, որ ISIS կրնայ ամբողջ քաղաքը իր տիրապետութեան տակ առնել եւ արեան բաղնիքի վերածել շրջանը: Գաղտնիք չէ նաեւ, որ քաղաքին մէջ մինչեւ այս պահը կան հազարի հասնող անկարներ, որոնք կարիքն ունին նախնական օգնութիւններու: Ու եթէ Քոպանիին ինչայ, ապա թուրքիայի տարբեր նահանգներուն մէջ սկիզբ առած բողոքի ցոյցերը կրնան տարբեր ծաւալներու հասնիլ:

Ամէն պարագայի յառաջիկայ օրերը կը պարզեն ընդհանուր պատկերը եւ յայտնի կը դառնայ, թէ թուրքիա պիտի յաջողի՞ համոզել ԱՄՆ-ը, որպէսզի ISIS-ը ասատեան ընթացքին դէմ օգտագործուի կամ պիտի պատահի՞ հակառակը, երբ թուրքիա, իր սահմանները բանալով թոյլ տայ քիւրտներուն ISIS-ի դէմ կռուելու: Իհարկէ, կայ նաեւ ՆԱԹՕ-ի ուժերու միջամտութեան տարբերակը, որ ցարդ կը մնայ խօսքի սահմաններուն մէջ:

Այս բոլորը կան, սակայն կարեւոր է նաեւ ուսական կողմին խօսքը: Մոսկուա, որ մինչեւ այս պահը մեծ վերապահութեամբ կը մօտենայ ISIS-ի դէմ ստեղծուած դաշինքին շատ խանդավառ չէ եղածով եւ վատհաբար պիտի փորձէ ապահովել Սուրիոյ մէջ քիմիական զէնքերու օգտագործման վերաբերեալ իր տարած դիւանագիտական չափերտեալ յաղթանակին կրկնութիւնը, միշտ օգտուելով ու գրաւը դնելով արեւմուտքի ու յատկապէս ԱՄՆ-ի գործած սխալներուն վրայ:

Կը մնայ վերջին հարցումը, արդեօք ո՞վ պիտի վճարէ Քոպանիի քիւրտներուն արեան գինը:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403b</li> </ul>
--	---	---

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**A.B.A. INSURANCE SERVICES**

*Insurance coverage can help you financially!*  
Ապահովագրութիւնը Աձիրաճողու է

Coverage & Protection should be on the top of your priority list.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄՏԱՀՈԳԻՉ Է...

#### ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

2014 թ. Մայիսի 23-ին Հայաստանում հնչեց վերջին գանգը՝ հրաժեշտ տալով 25 հազար դպրոցական շրջանաւարտներին, որոնք նախքան իրենց աւարտական քննութիւնները յանձնելը նշում էին դպրոցն աւարտելն ու նոր կեանք մտնելը տօնական միջոցառումներով:

Որքանով է ճիշտ դպրոցը աւարտողի նախքան քննութիւնները յանձնելն ու «ագատուելը» այդ հոգիից կամ «գլխացաւից», տօնական միջոցառումներ կազմակերպել, որից չետոյ վերադառնալ դպրոց եւ յանձնել աւարտական քննութիւնները: Հարցի պատասխանը թողնենք Հայաստանի կրթութեան ու գիտութեան (ՀԿԳ) նախարարութեանը, որի նախաձեռնութեամբ կազմակերպուած էին նաեւ տարուայ շրջանաւարտների տօնական միջոցառումները, որոնք առաջին հայեացքից արժանի են գնահատանքի:

Երեւանում շատ մեծ արձագանք գտան միջոցառումները, որոնք ուրախութիւն պատճառեցին նորաւարտներին, նրանց ուսուցիչ-ուսուցչուհիներին, ծնողներին, ՀԿԳ-ին եւ Ազգային ժողովի որոշ պատգամաւորներին՝ վարչապետ Յովիկ Աբրահամեանի գլխաւորութեամբ, որոնք անմիջական մասնակցութիւն ունեցան տոնական խնձողներին, պարեցին նորաւարտների հետ՝ ոգեւորելով նրանց եւ յոյսերն ամրապնդելով իրենց երազային ապագայի նկատմամբ:

Կրթութեան համակարգին անձանօթի համար այս բոլորը ընդունելի ու գովական է:

Կրթութեան համակարգի ղեկավարներից մէկը նշեց նաեւ, որ, նոյնիսկ կարեւոր չէ, եթէ դպրոցականը վատ գնահատականներով է աւարտում դպրոցը, կարեւորը նրա նոր կեանք մտնելն է, որը կարծում ենք ընդունելի չէ, քանի որ կրթութեան համակարգի նպատակն է պատրաստել լաւ ուսում ստացած շրջանաւարտներ, որոնք անսակարկ նուիրուածութեամբ կը մասնակցեն Հայրենիքի վերականգնման ու բարգաւաճման աշխատանքներին, միաժամանակ ապահովելով նաեւ իրենց ապրուստը...:

Տօնական միջոցառումների քննարկման ժամանակ հնչեց մի արտայայտութիւն եւս, որ խորհրդային շրջանում ուսանողները եւ՛ դպրոցում, եւ՛ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում (բուհերում) իրենց դասերն անգիր-բերանացի անելով էին աւարտում, այսինքն բան չէին սովորում: Իսկ Երեւանի փողոցում անցկացրած հարցազրոյցում շրջանաւարտների պատասխանները բազմազան էին. նրանց մի մասը ձգտում էր ընդունուել բուհ, բայց չգիտեր ի՞նչ մասնագիտութեամբ, մի մասը ընդհանրապէս չէր ուզում սովորել, մի մասը վստահ չէր, որ բուհը աւարտելուց յետոյ համապատասխան աշխատանք կը գտնի, մի մասն էլ... պատասխաններ, որոնք մտահոգութեան լուրջ առիթ են տալիս շրջանաւարտների եւ Հայաստանի տնտեսական զարգացման ապագայի նկատմամբ, քանի որ երաշխիքներ չկան մասնագէտների աշխատանքի տեղաւորման գործում...:

Այս ուղղութեամբ արժէ որոշ մտորումներ անել: Ես նախանձով լցուեցի դպրոցի շրջանաւարտների ներկայիս մօտեցումներին: Ես սովորել եմ Խորհրդային Հայաստանում: Դպրոցն աւարտել եմ Երեւանում 1951-52 ուսումնական տարում, իսկ Երեւանի պոլիտեխնիկ ինստիտուտը՝ 1959 թ. եւ անմիջապէս անցել աշխատանքի: Երկրորդ համաշխարհային կամ Հայրենական պատերազմին յաջորդող տարիներ էին եւ, բառիս բուն իմաստով, բոլորը մտածում էին մի կտոր հաց գտնելու միջոցների մասին: Ուստի մեր մտքովն անգամ չէր անցնում տօնական միջոցառումներ կազմակերպելը, որոնց համար 2014 թ. դպրոցի շրջանաւարտներից իւրաքանչիւրը, ըստ իրենց խոստովանութեան, ծախսում էին՝ 50-500 տոլար միայն հագուստի համար...: Չենք ժխտում, որ ժամանակները փոխուել են, բայց եթէ նկատի ունենանք Հայաստանում ներկայիս տնտեսական դժուար պայմանները, անկախ մեր կամքից պէտք է մտածենք, թէ այդ դրամը որտեղից են գտնում շրջանաւարտներից շատերը, որոնք միզուց ուտելու հացի դրամ էլ չունեն... բայց մասնակցում են իրենք իրենց «կաշին» քերթելով, մասնակցում են ծնողների ինչպիսի գոհաբերութիւնների հաշուին, որպէսզի «ամօթով» չմնան դասընկերների մօտ, մի խօսքով՝ չստորացուեն: Միզուց արժէ այդ մասին մտածել...:

Դպրոցում եւ բուհում կեդժիքների մասին խօսք չեղաւ, որոնք մեր ժամանակ էլ կային, բայց ոչ այսօրուայ նման, կարծէք թէ ձիւնը եկել եւ ծածկել էր այդ աղտը, որպէսզի ի յայտ գայ ձիւնը հալուելուց յետոյ...:

Ներկայումս Երեւանի դպրոցներում սովորող եւ վճարելու ի վիճակի չեղող, շատ դէպքերում, դասատուների պահանջները չբաւարարող աշակերտները արհամարհում են (նկատի ունեմ տօնական, այլ առիթներով միջոցառումների եւ ծննդեան օրերի առթիւ նրանց նուէրներ չտալը):

Խորհրդային Հայաստանում դպրոցներում եւ բուհերում բացասական երեւոյթների կողքին կային շատ դրական երեւոյթներ: Բերեմ մի օրինակ: Պոլիտեխնիկական ինստիտուտը աւարտելու շէմին էինք, մեր հայկական խմբին գուզահեռ կար նաեւ ուսական խումբ, որի մի ուսանողի մասին մեծ յօդուած յայտնուեց Խորհրդային Հայաստանի թերթերից մէկում այն մասին, որ այդ ուսունողը երբեք կարգին չի սովորել, բայց քննութիւններից միշտ ստացել է բաւարար գնահատական իր հօր շնորհիւ (խաղալով նրա պատուի հետ), որը Երեւանի բժշկական ինստիտուտի հեղինակաւոր ու յարգուած դասախօսներից մէկն էր: Հայաստանի անկախացումից յետոյ որեւէ ընթերցող հանդիպե՞լ է այդպիսի յօդուածի կամ գրութեան, գրուած որեւէ ուսանողի մասին, որի ծնողը պատգամաւոր կամ որեւէ բարձրաստիճան պաշտօնեայ է...:

Անկախ Հայաստանում բուհերի հարցերը յաճախ են շօշափուում լրատուամիջոցներում՝ համեմատելով ուսման որակը Խորհրդային շրջանի ուսման որակի ու կարգ ու կանոնի հետ: Այն ժամանակ անորակ շրջանաւարտների թիւը համե-

մատաբար քիչ էր եւ արդիւնաբերութիւնն ու գիտութիւնը զարգացան Հայաստանում, վերջինիս դարձնելով Խորհրդային Միութեան առաջատար հանրապետութիւններից մէկը: Նշենք փաստով. մինչեւ հիմա էլ Ռուսաստանի արբանեակների թուիչքների հաշուարկը, ինչպէս նաեւ նրա ռազմական արդիւնաբերութեան անհրաժեշտ հաշուարկների 30 %-ը կատարում է Հայաստանում:

Խորհրդային Հայաստանում բուհերն աւարտած մասնագէտներին անմիջապէս տեղաւորում էին աշխատանքի, անկախ իրենց գիտելիքների մակարդակից, բայց աշխատանքի ընթացքում նրանցից շատերը դառնում էին լաւ մասնագէտներ՝ հասկանալով կեանքի պարտադրանքը: Այդպիսի մի ուսանող ունէինք մեր խմբում, որը դարձաւ տեխնիկումի դասատու: Երեւանի էլէկտրաապարատների գործարանում որպէս գլխաւոր տեխնիկոգի տեղակալ աշխատելիս այդպիսի մի աշխատող ունէի ես, որը գծագրութիւնից բան չէր հասկանում եւ հիասթափուած, ուզում էր ազատուել աշխատանքից: Իմ աշխատանքի արդիւնքում նա դարձաւ լաւ մասնագէտ: Նոր աւարտածների շատերը այս ձեւով «գտնում էին» իրենց տեղերը եւ իրենց աշխատանքով գոհացնում ղեկավարներին: Նշեմ նաեւ, որ բուհում սովորելու ժամանակ մեր դասախօսները մեզ ընդունում էին իրենց երեխաների նման, որը ուժ ու եռանդ էր տալիս մեզ աւելի լաւ սովորելու համար:

Խորհրդային Հայաստանում կրթութեան հարցը պետութեան ուշադրութեան կենտրոնում էր ու բարձր մակարդակ ունէր, նկատի

չունենալով որոշ թերութիւններ, որոնք ամէն դէպքում չէին խանգարում ընդհանուր ուսում ստանալուն: Դասախօսները ուսման բարձր մակարդակ ունէին, ապահովուած էին կայուն աշխատավարձով եւ մեծ սիրով էին կատարում իրենց պարտականութիւնները՝ լաւ մասնագէտներ պատրաստելու համար: Բերենք որոշ վիճակագրութիւն:

1987-88 ուսումնական տարում Խորհրդային Հայաստանում (ԽՀ) գործել է 14 բուհ (59,778 ուսանող, ցերեկայինում՝ 42,152, երեկոյանում՝ 6879, հեռակայանում՝ 10,747), որտեղ կադրեր են պատրաստուել 156 մասնագիտութիւնների գծով: Աշխատել է 5389 դասախօս, այդ թւում՝ 21 ակադեմիկոս եւ թղթակից անդամ, 400 գիտութեան դոկտոր, 2604 գիտութեան թեկնածու:

1987-88 ուսումնական տարում գործել է 1427 հանրակրթական դպրոց, 988 դպրոցներում իրականացուել է աշխատանքային ուսուցում (քաղաքային՝ 430 եւ գիւղական՝ 558): Ցերեկային հանրակրթական դպրոցներում աշխատել է 46,100 ուսուցիչ (շուրջ 82%-ը՝ բարձրագոյն կրթութեամբ):

Անկախ Հայաստանում գործում են 26 պետական բուհեր, որոնցից 16-ը Հայաստանի հանրապետութեան (ՀՀ) կրթութեան գիտութեան նախարարութեան (ԿԳՆ) ենթակայութեան, 4-ը հիմնադրուած միջպետական համաձայնագրերով եւ պետութեան մասնակցութեամբ, 2-ը ՀՀ պաշտպանութեան ենթակայութեան ներքոյ, եւ 1-ական ՀՀ ոստիկանութեան, ՀՀ արտակարգ իրավիճակների նա-

Մար.ք էջ 18



THE AMERICAN ARMENIAN ROSE FLOAT ASSOCIATION  
CORDIALLY INVITES YOU TO THE PREMIER OF  
"CRADLE OF CIVILIZATION"  
THE FIRST ARMENIAN ROSE PARADE FLOAT

at a celebratory  
*Gala*  
Under the Stars

SUNDAY, OCTOBER 19, 2014 • 5:00P.M.  
ROSE BOWL – COURT OF CHAMPIONS  
1001 ROSE BOWL DRIVE • PASADENA, CA

\$200 DONATION

INFORMATION & RESERVATIONS  
Margaret 626-798-4480 margaretmgr@gmail.com or Flora 323-681-8975

# ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ ԵՒ ՏԵՍԱԺԱՊԱԲԵՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ



Մեր պապերի մշակութային ստեղծագործութիւններից այն ինչ հասել է մեզ՝ հրաշքով գերծ են մնացել մեր երկիրը կողոպտող ու թալանող թշնամիների ձեռնահասութիւնից: Ստեղծագործող ու շինարար մեր ժողովրդի ողջ արարումները եթէ պահպանուէին, ով

գիտէ ինչ նախնաձեւի վիճակ պիտի ներկայացնէինք: Մեր պապերի գլխից կտրուած է եղել երկար խաղաղ պայմանների գոյավիճակը, շարունակ արշաւանք, կռիւ, օտարների տիրապետութիւն, գերութիւն, ջարդ եւ կոտորած ու փոթորկալից վիճակ, նրանք ամենակարճ խաղաղութեան պայմաններում իսկ արուեստի կոթողներ են ստեղծել, որոնցից շատ քչերն են մեզ հասել, այն էլ ինչ հասել է, դա ապացոյցն է մեր ժողովրդի բարձրարուեստ կարողականութեան:

Մշակոյթի ճառագայթող հիմնաքարը պատկան ժողովուրդն է իր տաղանդներով ու հանճարներով, դպրութեան առանցքն է կազմում լեզուն եւ լեզուամտածողութիւնը: Մեր հայերիս լեզուն հայերէնն է, որի այբուբենի արարիչն եղաւ Սբ. Մեսրոպ Մաշտոցը կեանքի կոչելով 406 թւին: Մեսրոպեան տառերի գիւտով հիմքը դրուեց հայոց դպրութեան, որը դարձաւ հայ ժողովրդի գոյութեան առհաստացեան:

Մշակոյթի տօնի առիթով սոյն գրութիւնը ձօնում եմ հայոց մտքի ու բանի գանձարանը հարստացնող եւ ճոխացնող արուեստից ստեղծագործողներին, Մեսրոպեան Չահր վառ պահող մեր ուսուցիչներին եւ բոլոր նրանց, ովքեր իրենց հայապահպանման ծառայութիւնն են բերում առ ի գոյատեւումն սերունդների եւ հայոց մշակոյթի:

(Սուրբ Մեսրոպ Մաշտոցին ձօնուած իմ պոէմը՝ «Փառքը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի»-ից մի պտղունց հատուած է ներկայացուում)

### Նախերգանք

Տարօն գաւառի Հացեկաց գիւղում,  
Շինական Վարդանի ընտանիքում,  
Յամի տեան 360 թուականին,  
Մի մանուկ ծնուեց:

Նրան մկրտեցին Մեսրոպ անուն,  
Յետոյ անուն-ազգանուն ընդելուզուած,  
Ոնց ջախը ժամի լոյսերով փնջուած,  
Յորջորջուեց Մեսրոպ Մաշտոց անուն:

Նրա տաղանդն ու ձիրքն անթեղուած,  
Մի օր պիտ բռնկէր ի սէր հայութեան,  
Հայոց համար ճակատագիր ճշտեր,  
Յաւերժ կեանքի ճամբան առաջնորդեր:

Անյոյս վիճակին յոյս, հաւատք  
Գնրչնէր,  
Սեփական դպրութեամբ ազգը  
Գինէր,  
Լուսոյ տաճարներ ամենուր հիմնէր,  
Հայաստան աշխարհը լուսաւորէր:

\*\*\*\*\*

Երկնեց հայաոգի, խորհրդաւոր  
Գնաճարերը,  
Հայի արիւնից ու էութիւնից  
Ծնուած գրերը,  
Հայի հոգու պէս գեղեցիկ ու

արեւոտ տառերը,  
Հայի հաւատքը ճառագայթող  
Աւետարանը:

Նա տառապանքով, բայց սիրով  
արարեց գրեր,  
Անարիւն գէնք, զօդող, առիւք-  
նող եւ արեւային,  
Խաւարակուռ մտքերը լուսաւորող  
փարոսներ,  
Հայոց սրտերը միացնող պատգամ  
երկնային:

Հայի Աստուածը նրան օգնեց,  
Արարումի ձիրք ու տաղանդ  
տուեց,  
Որ հայի հաւատքը անեղծ պահի,  
Որ հայ սրտերի կապը ջերմ պահի:

Երբ տառերի գիւտը իմացուեց,  
Սրտերում ոգեւորութիւն տիրեց,  
Աշակերտներն առ Աստուած աղօթեցին,  
Գոհութեան հանդէս կազմակերպեցին:

Ամէն գործ իր սկիզբն ունի,  
Ամէն սկիզբ իր վերջն ունի,  
Ամէն վերջ իր պտուղն ունի,  
Ամէն պտուղ իր արդիւնքն ունի:

Գնութեամբ կեանքը արգասաւորուեց,  
Հրաշագեղ եւ անմահ տառերը  
լուսապայծառ,  
դարձան հայ ժողովրդի երթի  
ճամբան:





# ԱՆՍԱՌ ՓԱՌՔԻ ՆԵՐԲՈՂ ՍՈՒՍԱՆԵՐԻ ԼԵՌԱՆ ԼԱՆՋԻ ՇԵՆԵՐԻ ՔԱՋԵՐԻՆ

## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

«Եթե մի երեք այդպիսի Մուսա Լեո լոյս ընկնէր, գործը այլ ընթացք կը ստանար: Ա՛յն, Սրբազան, երանի՛մ Մուսա Լեոն գագաթին լինէի: **Յովհաննէս Լեփիսուս**»

Աշխարհն առողջ, լիարիւն ազգերի հետ ի հաշուի նստում եւ ոչ՝ հանճարեղ ու տանուլ տուած դժբախտների:

### Եզրի Չարեան

«Միտք պահէ՛, թէ դու Մուսա Լեոյի ես, նոյնիսկ եթէ բախտ քու անձը բերած ըլլայ ինչ այս նոր հոդերուն կամ նետած տարագրութեան որեւէ գեհանի մի կրակին: Միտք պահէ՛: Գառաւուռ օրեր՝ Գառաւուռ արեգակի պէս, Գառաւուռ դար կը լուսաւորեն:»

### Եզրուարդ Պայանեան

«Եւ երբ մեծ տեսանք թուրքիայի այդ գոհին՝ մեզ յառած մարող աչքերով, որոնց մէջ յոյսի շող առկայ չէր, մեծ վերջապէս հասկացանք, որ այդ մեր հոյսն է մեծնում Արեւելիում եւ մեծնում է հեկտրա համար, որ նա մեր հոյսն է, որի յանցանքն այն է, որ նա համակուած էր մեր գագաթում ներքով, սիրում էր այն, ինչ մեծ սիրում, մտածում էր այնպէս, ինչպէս մեծնեմ մտածում, հաւատում էր նրան, ինչին մեծնեմ հաւատում էր իմաստնութիւնը, արդարութիւնը, բերքութիւնը, արուեստը: Սա էր նրա անհաւելի յանցանքը: Հայաստանը վերջին շնչում է, բայց նա կը վերածնունդէ: Արեւան այն փոքր փանակութիւնը, որը նա դեռ պահպանում է, բանկազին արիւն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդը, որը մեծնել չի ուզում, երբեք չի մեծնի:»

### Անաթոլ Փրանս

Ապոլոնը իրենց թեւերին յենած, մուսաները ճախրում էին դէպի «Աքրա» լեռան գագաթ: Անցել էին ծովերի վրայով, անցել անհրապույր բնութեամբ երկրների վրայով, հասել մշտադալար անտառներով լեռներ, մի պահ պտտել նրա վրայ, գմայլել նրանց առինքնող գեղեցկութեամբ, ապա թեքուել աջ, իջել «Աքրա» լեռան գագաթի ջեւս աստուծոյ տաճար, նրա պատուին գոհ ու պաշտամունք նուիրելու:

Մինչեւ ծովի ափեր հասնող այդ ընդարձակ լեռների շրջանը կոչուել էին Պիերոս-Պիերիա: Տեղի բնիկները նկատել են իրենց լեռների վրայով անցնող ջեւս աստուծոյ որդի Ապոլոնին ու նրա մուսա քույրերին: Պիերիայի աստուածներին սպասարկող քուրմերը սկսել պաշտամունք նուիրել նրանց, ի պատիւ նրաց, իրենց ընդարձակ լեռների շրջանը նրանց անուանով՝ «Մուսաների Լեռներ» անուանել:

Արեւելքի արքաների-արքայ Մեծն Տիգրանի քաջերի գէնքը հասել է նաեւ Պիերիայի լեռներ: Արքայի գորագուհու, գինուորական տողանցքով մտել Անտիոք, հանդիսաւոր արարողութեամբ նրան յանձնել են Սեյեկեան պետութեան թագաւորների թագը, հռչակել՝ «Սեյեկեան պետութեան տիրակալ»: Արքայի գորական գունդերի հետ եկել էին նաեւ Արմինա-Հայաստանի հարաւի բնակիչների հոծ խումբ, բնակութիւն հաստատել քաղաքա-

մերձ դաշտում, հող մշակել: Լեռնական մարդիկ էին, անսովոր դաշտալին տաք կլիմայի: Տիգրան արքային ու փոխարքայ Բագարատին (Տիգրան արքայի բանակի գորաւարներից) խնդրել բնակութիւն հաստատել Անտիոքին մօտիկ լեռների լանջերին: Տիգրան արքան Անտիոքի աւազանից պահանջել է տեղեկութիւններ այդ լեռների մասին: Տեղեկանալով Պիերիա-ի մասին շրջան արած պատումներին, հրամայել քաղաքային մատենաւում այն անուանակոչել՝ «Մուսաների Պաշտամունքի Լեռներ», թոյլատրել իր գորագուհու հետ եկած մարդկանց բնակութիւն հաստատել այնտեղ:

Լեռան լանջերին, արեւի երեսին նայող շէնքեր յաննեցին: Նախնիների նման, առուներ բացեցին՝ մօտիկ գետի ջրերը դաշտեր հոսեցին: Լեռան լանջերին դարաւանդներ պատեցին, իրենց երկրից բերած տանձենի, խնձորենի, սալորենի, թթենի ծառեր տնկեցին: Իրենց աստուածների, «Միւր Կաթին» ի տաճարներից բերած ծիրանի ծառեր հողին տուին, որ անտիոքիները կրակէ պտուղ ճաշակէին: Իրենց յաւերժութեան խորհրդանիշ նշաններ տնկեցին, որ աստուծու կարմիրը հոսէր լեռների երեսին: Անտառների բացատներում հոնի ծառեր տնկեցին, տե՛սել էք ծաղկած հոնենի, աստուածները կրակ են վառում նրանց ոստերին, որ մարդիկ գնան ափերով լոյս ժողովեն, դէմքերը ցողեն աստուածների կրակով, որ նրանց հոգիները հայրենեաց սիրով հրովառուեն:

«Մուսաների Պաշտամունքի Լեռ»-ան լանջերի շէնքեր մարդիկ, իրենց հայրենի երկրի նման հողի մշակ-երկրագործներ եղան, իրենց երկրից բերած հումքեր տուին հողին, լեռան լանջերին հող արարեցին: Ենթերի ու լեռների լանջերին կանաչ շապիկներ փռեցին, որտեղ խարոյկի հազար-հազար գոյնի կրակի բոցեր վառուեցին: Հազար-հազար տարիների արարում եղեւ այնտեղ:

Հեռու արեւելքի խաշնարած մարդիկ, անապատի դաժանութիւնը ու իրենց հաւատքի խելացի մոլուցքը սրտերին, ներխուժեցին Մերձաւոր Արեւելք, Փոքր Ասիա երկրներ, հասան նեղ Բիւզանդիոնի մայր ոստան, ասպատակ գինուորներ երեք օր խրախճանքի խարոյկներ վառեցին փողոցներում, պատնեներում, մոխրացաւ-սեւացաւ Բիւզանդիոն ոստանը, սպաննեցին կայսրին, նահատակուեցին նրանց պաշտպանական մարտերին եկած Արմէն արորդիներ: Բիւզանդացի կայսր, փլեցիր արարչական բարձրաւանտակ երկրի պարիսպը, մեռար նրա հանդէպ գործած մեղքերի համար: Օսմանը ձին հեծած մտաւ տաճար, պղծեցին նրանց Աստուծոն ու նրա Որդուն: Տիրեցին Ասորիքին ու աւելի հեռուների Մուսաների շէնքերին: Արմինա բարձրաւանդակին տիրելու համար երկարատեւ պատերազմ օսմանցի թուրքի ու Պարսկաստանի միջեւ, Արաքսի ջրերով այն բաժանեցին երկու մասի՝ Արեւելեան ու Արեւմտեան Հայաստաններ:

Իրենց հաւատքին «Ղայիմ» կանգնած Աստուծոյ սպասաւորները յորդորեցին հնագույնի տեղերին, ստորիկ եղան, տուրք վճարեցին տիրողին, փաշաներին, պէկերին, քիւրտ ցեղապետներին: Անուշ մանչերին որպէս տուրք պոկեցին մայ-

րերի գրկերից, կրօնափոխ արեցին, իսլամացրին, դաժան գինուորներ եղան: Ծառ-շատ Արմէն-Հայեր, առանց կուռի փախան իրենց արարչական երկրից, կեդրոնախոյզ նախարարներ, նոր հաւատքի սպասաւորները սպաննել էին նրանց «Հայրենեաց Ոգին»: Ընդվզեց հայրենեաց հողին կառչած Հայը, գէնք վերցրեց, ազատագրական պայքար մղելու համար ելաւ լեռներ, կուռեց թուրքի ու քիւրտի դէմ, քիչ էին, պետութեան դէմ կուռելու համար արդէն շատ քիչ էին: Պարտուեցին...: Աշխարհի մարդիկ պատերազմում էին, աշխարհը նորէն բաժանելու ու վերաբաժնելու: Թուրքը գերմանի հետ կուռի դաշտում էր: Յարմար առիթ էին համարել ոչնչացնելու բնիկ Արմին-Հայ ցեղին, կարաւաններ կազմած տարագրել անապատներ, գինուորագրել առանց գէնքի: Սարսափելի է մտածել, որ առանց կուռի սպաննուեցին, տարագրուեցին իրենց հազարամեայ հազարաւոր շէնքերից: Ո՛վ էր իրենց հոգիներում սպաննել իրենց հին աստուածների, նահապետների, նախնի արիական քաջերի կուռի ոգին, քարոզել էին հնագանդել տիրոջը, ներել, սիրել թշնամուն, շա՛տաշա՛տ քիչ շէնքում, մի քանիսում, կուռ տուին դուշմանին: Հինգ ռազմական էին խարսխում փարաւոնների երկրի Փորթ-Սայիտ նաւահանգստի քարափին: Նաւի կամրջակին կանգնած երկու գինալառ լեռնականներ, մառգէրների հիսուն երեք համազարկ տուել, ի պատիւ իրենց հիսուն երեք օրերի յաղթական կուռի: Բազմութիւն էր քարափում, զարմացել, ո՛վքեր էին այդ ռազմական լեռնականները: Իմանալով իրենց ցեղի դուշմանի դէմ նրանց յաղթական կուռը, որբուկներին գրկած մայրերը պարսականքի խօսքեր կանչել՝ իրենց շէնքում դուշմանի դէմ կուռի չելած տղամարդկանց:

Մուսաների Լեռան մարդիկ կուռի խարոյկ էին վառել իրենց լեռան գագաթին, զարկում էին դուշմանին: Կուռ էր նրա բարձունքներին, լեռան խորը ձորերը ահաւոր մոնչիւնով արձագանգում գէնքերի որոտները, կուռի համաուռազ էր այն: Պատերազմ էր Մուսաների լեռներում, բոլորը, նաեւ իրենց հաւատքի լեռնական սպասաւորները, մերժել էին դուշմանի հնագանդութեան, նրան ներելու պատուիրանները:

Անտիոքի Գայմագամը, (կառավարիչ) 1915 թուականի Հուլիսի 13-ին ազգաբարոյութեան գիրուղարկել Մուսաների Լեռան շէնքերի «Մուխթարներին» (գիւղապետ)՝ եթէ օրերի ընթացքում պատրաստ լինել տարագրուելու: Եօղունջուղ գիւղի Աւետարանչական պատուելի՝ Տիգրան Անդրէասեան, Զէյթունի հոգեւոր հովիւր եւ տեղի որբանոցի պատասխանատուն, կարաւանների հետ քայլել, այնուհետեւ ճամբորդելով Ամերիկեան

Միսիոնարների միջնորդութեամբ, հասել հայրենի Եօղունջուղ գիւղ: Տիգրանը, նոյն գիւղի քահանայ Աբրահամ Տէր-Գալուստեանի տանը, գիւղապետերի ու երեւելիների հետ խորհրդակցական ժողով գումարել, որին չէին մասնակցել Քէպուսիցի գիւղի երեւելիները: Տիգրանը պատմել է վերադարձի ճանապարհին հանդիպած կարաւանների արհաւիրքի դրուագները, թշնամու գորանոցներից դասալիք գինուորներ պատմել տարագրութեան ճամբաների սարսափների մասին: Որպէս փրկութեան միակ միջոց եւ իրենց կանանց պատուի ու հայրենի հողի պաշտպանութեան համար Տիգրանը յորդորել է ապաւինել իրենց լեռներին, կուռի ելնել նրա բարձունքներ, լեռան ստորոտների ժայռեղէն կուրծքին փշրուող ծովից հնարաւոր փրկութեան յոյսի լոյս որոնել: Տիգրանը իր յանդուգն առաջարկը պաշտպանել, որ շինականները լաւ նշանաու անվեհեր մարդիկ էին, լեռները ծածկուած խիտ անտառներով, ծանօթ նրանց միջով անցնող նեղլիկ ճամբաներին, Աստղիկն ու Մուսա քույրերը մշուշել էին այն:

Ապստամբել է Արմէն-Հայը, յեղափոխական ոգու խարոյկներն էին բոցավառուել լեռնականների սրտերում, աշխարհը վերափոխելու, ո՛չ, իրենց հոգիներում նախնի Արմէն հեթանոս ցեղի աստուածների ոգու անթեղուած կրակն էր նորէն ճարճատում, Վահագնի ստուերն էր նաեւ ելել Մուսաների լեռներ՝ կուռ տալու դուշմանին, սպաննելու իրենց լեռներ ելած թշնամու գինուորին:

Գիւղեր են ժամանել ոստիկանները... գիւղերում ոչ մի մարդ: Նրանք արդէն լեռների բարձունքներին էին: Մինչեւ կը պատրաստուէին ճամբար դնել, տեղատարափ անձրեւ է տեղացել՝ շարունակել ամբողջ գիշերը: Լեռնականները, բնութեան արհաւիրքը դիմագրաւելու համար վատ էին նախապատրաստուել՝ չէին հասցրել խրճիթներ պատրաստել, թրջուել էին բորբոք՝ մօտ հինգ հազար հոգի, թրջուել էր իրենց հետ բերած ուտելիքը, յատուկ խնամքով կարողացել էին թրջուելուց պահպանել փամփուշտների վերալիքաւորման վառօդի ռազմամթերքի պաշարը:

Յաջորդ օրը, բոլոր աշխատող մարդիկ, լեռան գառիթափերի կարեւոր ռազմական նշանակութիւն ունեցող կէտերին խորամտներ փորել, որտեղ հողային չէր, իրարու վրայ ժայռեր թաւալելով՝ հզօր պատնէշների ամրութիւններ ստեղծել: Այնտեղ տեղաբաշխել էին որոշ թուաքանակով հրաձիգների խմբեր: Ժայռաբեկորներ էին դիզել, իրենց նախնի Անգեղաց Տորքի նման յարձակուող թշնամու գորքի վրայ գլորելու: Պատասպարուելու համար հիւղակներ պատրաստել, զօրանոց պատել:

(Շարունակելի)

## ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՆ՝ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՒՆ

### Շարունակուած էջ 14-էն

երբ ազգային գործիչներ ու քաղցնեխացած ջոջեր, պատասխանատու դիրքեր զբաղեցնող տարրեր թէ քիչ մը ուշ հարստացած նորելուկ «ընտրանի»ներ իրենց թոթովախօս որդիները կը մղեն օտար ափեր՝ Մաշտոցի անհաղորդ միջավայրերում մէջ ազգ ու լեզու մոռնալու համար, աւելի ուշ՝ ուրանալու համար...: Թարգմանչաց տօնին այս-

օրուան պատգամը պարզ է ու մեկին՝ հայոց լեզուն՝ ինքնութիւնը հայուն:

Մինչ, խոնարհելով մեծն Մաշտոցի յիշատակին առջեւ, տաղանդաշատ բանաստեղծ Սիւսանյանի բառերով կը հաստատենք՝ ՄԵՍՐՈՒՆ, ՀԱՅ ԴԱՐԵՐՈՒՆ ԴԻՍԻՍԱՅ ԿԵՑՈՂ՝

Դ Ո Ւ Ն Ա Դ Ա Մ Ա Ն Դ Ե Ա Յ Ա Պ Ա Ռ Ա Ք:

«ԱՐԱՐԱՏ» ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՍՄԲՈՒԿԻ ՍՆՆԴԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լեցուկ կենսանիւթերով եւ հանքանիւթերով, Սմբուկը կենսական եւ ուժ պարունակող պտուղի տեսակ մըն է:

Սմբուկը իր բաղադրութեամբ՝ մարմնի առողջութեան կը սատարէ, մինչեւ իսկ կ'անխարզիլէ քաղցքեղը եւ կը նտագեցնէ մարմնի իւրը (քոլէսթէրոլը):

Սմբուկը կը պարունակէ նաեւ "chlorogenic" կոչուած թթուածինը - բուսական բաղադրութիւն ունեցող, հակա-օքսիտացնող եւ մարմնի վատ իւղերը նուազացնող իր յատկանշական ազդեցութեամբ: Այս թթուածինը նաեւ մարմնի բջիջները հիւանդութիւններու դէմ պատրաստող եւ պայքարեցնող

յատկանիշներ ունի:

Սմբուկի կեղեկներուն մէջ կը գտնուի Nasunin (Նասունին) կոչուած հակա-օքսիտը որ կ'անխարզիլէ հիւանդութիւններու եւ քաղցքեղի յառաջխաղացքը:

Սմբուկը կը պարունակէ սքանչելի նեարդ - (Ֆայպր), որ կը պահպանէ մարմինը երկրորդ տեսակի շաքարախտէն եւ կը հանգստացնէ մարտդական դրութիւնը: Անոր մէջ կը գտնենք նաեւ կենսանիւթեր եւ հանքանիւթեր - վիթամին A, B, C, Ֆոլէյթ, փոքրածաւք, մակնէզիում, գալսիում, եւ ֆոսֆորիւս: Սմբուկը կրնայ նաեւ "ալլէրթիք" հակա-ազդեցութիւն յառաջացնել ունանց մօտ: Հարկ է գտնել ըլլալ:

### ԻՆՉ ՕԳՏԱԿԱՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԽԱՂՈՂԸ

1. Խաղողի հատիկները կը պարունակեն շատ շաքար եւ քրքմեղ (Galium): Խաղողն ու անկէ պատրաստուած հիւթը կը բարելաւեն մարմնի ջուր-աղային փոխանակութիւնը, որուն իբրեւ արդիւնք մարմինը կը մաքրուի միզաթթուէն:

2. Խաղողը օժտուած է միզամուղ յատկութեամբ: Բացի այդ, լաթթուցնող ու քրտնամուղ ազդեցութիւն կ'ունենայ մարմնին վրայ: Լաւ միջոց է երիկամներու եւ միզաքարային հիւանդութիւններու, ինչպէս նաեւ փորկապութիւններու պարագային: 3. Կ'օգնէ կարգաւորելու զարկերակային ճնշումը: 4. Կը նպաստէ քոլէսթերոլի մակարդակի նուազեցման ու սրտամկանի ուժգնութեան բարձրացման:

5. Խորհուրդ կը տրուի սակաւարիւնութեան պարագային, ջրային ու ֆիզիքական հիւստիան, յատկապէս կենսանիւթատապի կամ

ալ ապաքինման ժամանակ, քանի որ կը պարունակէ շաքար մը կենսանիւթեր ու հանքային նիւթեր:

6. Շատ օգտակար է պրոնշիթով, ասթմայով ու թոքախտով հիւանդներուն, կ'օգնէ շնչուղիներէն լորձի հեռացման:

7. Մուգ գոյնի պտուղներուն մէջ p-active նիւթերու՝ պիոֆ - լաւոնոյի տներու պարունակութիւնը աւելի շատ է, քան բաց գոյնի տեսակներուն մէջ: Անոնք կը նպաստեն սիրտանօթային համակարգի ամրապնդման: 8. Խաղողը կը պաշտպանէ մաշկը կնճիռներու յառաջացումէն, շրջակայ միջապայի վնասակար գործօններու ազդեցութենէն՝ պահպանելով մաշկի թարմութիւնն ու երիտասարդութիւնը: Խաղողէն կը պատրաստեն հիւթ, անուշ, գինի եւ այլն: Իւրաքանչիւր վիճակի մէջ անիկա բարեբար ազդեցութիւն ունի մարմնին վրայ:

### ՈՐՈՆՔ ԿՐՆԱՆ ԱՄԵՆԵՆ ՀԱՏ ԱԶԳՈՒԼ ՄՇՏԱԿԱՆ ԸՆՇՈՒԱԾՈՒԹՆԵՆ

Նորագոյն հետազոտութիւններուն համաձայն՝ քանատացիներուն աւելի քան 23 առ հարիւր համեմատութիւնը խոտտովանած է թէ կը տառապի լուրջ եւ մշտական ճշուածութենէ (Chronic Stress): Անոնք նաեւ յայտնած են թէ ճնշուածութիւնը անոնց մօտ առկայ է գրեթէ ամէն օր: Մշտական ճնշուածութիւնը կը բարձրացնէ հոգեկան եւ ֆիզիքական առողջութեան վատթարացման վտանգը, սակայն ամէն մարդ չէ որ նոյն ձեւով կ'ազդուի ճնշուածութենէն եւ կը կրէ անոր հետեւանքները: Ըստ մասնագէտներուն, կարգ մը մարդիկ կը զարմարին ճնշուածութիւն պատճառող կեանքի պայմաններուն, իսկ ուրիշներու պարագային՝ ճնշուածութիւնը կրնայ չափազանց վատ հետեւանքներ ունենալ:

Քանատայի մէջ գտնուող Քոնքորտիա Համալսարանի հետազոտական խումբը բարեբախտաբար յաջողած է յայտնա բերել թէ որոնք ամէնէն շատ հակամէտ են ազդուելու ճնշուածութենէն: Անոնց հետազոտութեան մասին անդրադարձած է Stress ամսագիրը, ըստ որուն քանատացի գիտնականները քննած են մասնակիցներուն ճնշուածութեան մակարդակը թէ՛ սովորական ուսման օրերուն եւ թէ՛ քննութիւններու ժամանակ:

Բնականաբար, քննութեան ժամանակ ուսանողներու մօտ կը բարձրանայ ճնշուածութիւնը: Նշենք, որ այս հետազոտութեան մասնակիցներուն թիւը հասած է 76-ի:

Հետաքրքրական է, որ գիտնականները ուսանողներու ճնշուածութեան մակարդակը քննելու համար հիմնականօրէն ուշադրութիւն դարձուցած են անոնց արտի տրոփումները:

### ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Շարունակուած էջ 13-էն

զարմանում էին, թէ տառերի գիւտից անմիջապէս յետոյ, գրաբար լեզուն ինչպէս ձեռք բերեց այնպիսի արտայայտչական կարողութիւն ու ձկնուտութիւն, այնպիսի հարազատութեամբ ու գեղարուեստական բարձր որակով արտայայտելու թարգմանուած բարդ երկերը: Ես հաւատացած եմ, որ դա արդիւնքն է թարգմանիչների կատարած տքնաջան աշխատանքի, որ կրօնական արարողութիւնների ընթացքում, տեղի վրայ միաժամանակ կատարած բանաւոր թարգմանութիւնների միջոցով մշակուած, կոկոնում ու յղուած էին գրաբարը, ժամանակի հանրային, հասարակական հաղորդակցութեան լեզուն. վարժուած էին թարգմանութեան աշխատանքում: Հայոց քրիստոնէութեան ընդունումից մինչեւ տառերի գիւտը շուրջ մէկ դար է լինում. այդ հարիւր տարիների ընթացքում կրօնական արարողութիւնների ժամանակ թարգմանիչները շարունակ հայերէնի թարգմանեցին յունարէնն ու ասորերէնը, մշակեցին հայերէն գրաբար լեզուն, հմտացան թարգմանութեան գործում, ու երբ գործը եկաւ Սուրբ Գրքերի հիմնաւոր, գրաւոր թարգմանութեանը, թարգմանիչները հմտացած, պատրաստ էին. Սուրբ Գրքերի եւ մնացեալ կարեւոր երկերի թարգմանութիւնը յաջողութեամբ իրականացրին: Լեզուաշինութեան ազնիւ ու ներհուն աշխատանքում դա էլ թարգմանչաց շարժման նուաճումներից է:

րու փոփոխութիւններուն՝ երբ ուսանողները կը հանգստանային եւ երբ անոնք կը մտածէին մտահոգիչ դէպքերու մասին: Իսկ նախքան քննութիւնները, ինչպէս նաեւ քննութիւններու ժամանակ անոնք հետեւեցան ուսնողներու տրամադրութեան փոփոխութիւններուն:

Փորձարկումի ընթացքէն աւելի հետաքրքրական են անոր արդիւնքները, որոնք ցոյց տուին թէ ճնշուածութենէն ամէնէն շատ կրնան ազդուել այն անձերը, որոնց արտի տրոփումները կայուն կը մնան մտահոգութեան ժամանակ: Այլ խօսքով՝ երբ մտահոգութեան ժամանական արտի տրոփումները քայլ չպահեն ուղեղին մէջ տեղի ունեցող հորմոնային փոփոխութիւններուն հետ, անձը կրնայ հետագային առողջապահական հարցեր դիմադրաւել, ճնշուածութեան հետ չկարենալ յարմարելու հետեւանքով:

Հիմնուելով Քոնքորտիա համալսարանի հետազոտութեան արդիւնքներուն վրայ կարելի է եզրակացնել թէ արտի ձկնուտութիւնը կրնայ անհատին հոգեկան եւ ֆիզիքական առողջական վիճակը գնահատելու կամ գուշակելու գործօն մը ըլլալ:

Յստակ է, որ ճնշուածութեան կամ մտահոգութեան ժամանակ մարմնին համար աւելի նպաստաւոր է, որ արտի տրոփումները անկայուն ըլլան: Բնականաբար, ճնշուածութեան պարագային սիրտը կը սկսի արագ տրոփել, որպէսզի յաւելեալ թթուածին (oxygen) հայթայթէ մարմնի մկաններուն եւ ուղեղին եւ միւսներուն ժամանակ արագօրէն դուրս հանէ մարմնին մէջ գտնուող յաւելեալ ածխածինի երկօքսիտի (carbon dioxide) քանակը:

Յայտնի է Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնը, կատարուած Երդ դարում, որպէս »Թարգմանութեանց Մայր Թագուհի«: Այդ ժամանակաշրջանում յունարէնից եւ ասորերէնից հայերէնի թարգմանութեան բազմաթիւ երկեր, ինչպէս՝ Աթենաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Սեբերիանոս Գաբաղացու, Կիրեղ Երուսաղեմցու, Եւսեբիոս Կեսարացու, Եփրեմ Խուրի Ասորու, Յովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նիւսացու, Պրոկլի, Դիոնիսիոս Թրակացու, Փիլոն Եբրայեցու, Տիմոթէոս Կոզի, Պորփիրի, Արիստոտելի, Պլատոնի գործերը: Այդ երկերից մի քանիսի բնագրերը կորած լինելով հայերէն օրինակները բնագիր են համարուած:

Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի աշխատասիրած հոգեւոր եւ ծիսական երկերը, Կորիւն Սքանչելիի, Ղազար Փարպեցու, Մովսէս Խորենացու, Եզնիկ Կողբացու, Եղիշէի եւ միւսների գործերը հեղինակային աշխատութիւններ ու ստեղծագործութիւններ լինելով հանդերձ, շահուել են նաեւ թարգմանական վաստակից: Այսպիսին է եղել թարգմանիչների եւ թարգմանչաց շարժումի ազդեցութիւնը եւ արդիւնքը հայոց ազգային գրագրական հոլովոյթում: Մշակութային, բանասիրական, մատենագիտական եւ գրական տօներով ենք ըստ արժանաւորի մեծարում հայ դասական թարգմանիչներին եւ գրական ստեղծագործող քանքարաւորներին: Փառք հայ մշակոյթին:

### ՍՆՆԴԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԸ ԿԸ ՓՃԱՑՆԵՆ ՄԱՇԿԸ ԵՒ ՉԵՆ ԱԶԱՏԵՐ ԱԻԵԼՈՐԴ ԿՇԻՈՔԵՆ

Չուիցերիոյ սնունդի ուսումնարանի անդազէտ Ամանտա Փէյն կը պնդէ, որ ցած ջերմութով խմիչքները, փոխանակ լուծելու աւելորդ կշիռքի խնդիրները, կը խորացնեն գանոնք եւ բացի այդ՝ կը յառաջացնեն մաշկի արագ ծերացում:

Անոր ուսումնասիրութիւններուն իբրեւ արդիւնք պարզուած է, որ սննդագիտական խմիչքներու սի բահարները իւրաքանչիւր կառուցուածք ունին՝ փորի եւ գօտկատեղի վրայ աւելորդ ճարպային ծալքերով: Ասիկա կը վերաբերի նաեւ անոնց, որոնք կը նախընտրեն այնպիսի խմիչքներ, որոնց մէջ շաքարի փոխարէն կ'օգտագործուին շաքարի փոխարինողներ:

Ասիկա տեղի կ'ունենայ այն

բանին հետեւանքով, որ մարդուն ստամոքսին մէջ բնակող մանրէները չեն կրնար իւրացնել շաքարի փոխարինողները, որուն իբրեւ հետեւանք նիւթափոխանակութիւնը կը խախտի, եւ մարդը կը կորսնցնէ վերահսկողութիւնը իր ախորժակին վրայ, անոր համար դժուար կ'ըլլայ զսպել ինքզինք:

Մննդագիտական խմիչքներում մեծ մասին մէջ պարունակուող ֆոսֆորային թթուն մարմնէն դուրս կը հանէ հանքային նիւթերը, որոնք անհրաժեշտ են նոսկորներու ամրութեան, ստամոքսի ու առողջութեան եւ մաշկի գեղեցկութեան համար: Մննդագիտական ըմպելիներու պարբերական օգտագործումէն դէմքի մաշկը կը չորնայ, եւ կը մեծնայ ժամանակէն շուտ կնճիռներու յառաջացման վտանգը:

### ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ

Շարունակուած էջ 8-էն

Հայկական երկխօսութիւնը, ինչպէս՝ լրագրութեան եւ յօդուածի փոխանակման, գիտաժողովներ թուրքիոյ մասին Հայաստանի եւ Հայաստանը՝ թուրքիոյ մէջ: Ան մինչեւ հիմա կ'աշխատակցի թուրքիոյ IMC հեռուստատեսութեան մէջ որպէս արտագրիչ եւ խմբագիր: Ան ստեղծած է առաջին հեռուս-

տատեսիլի ներկայացումը՝ «Կամուրջ» խորագրով թուրքիոյ փոքրամասնութիւններուն մասին, յատկապէս Հայերը 2011ին, որ տակաւին կը շարունակուի: Արձանագրած է կարգ մը վաւերագրականներ Հայ ժողովուրդի հարցերուն, փոքրամասնութիւններու իրաւունքներուն եւ խօսքի ազատութեան մասին, ինչպէս avtobus (2012), 23 եւ կէս մը (2013):

### Մինակում որոշուել են Հայաստանի սահմանները

Շաբաթական Էջ 2-էն

ուէն՝ ընդամենը չհամաչափ ջղաձգութիւն:

Այդ ամէնը ներկայում կարող է թուալ անհարկի չափազանցութիւն, բայց այն, ինչ Հայաստանում տեղի է ունենում այսօր՝ ընդ որում թէ ներսում, թէ Հայաստանի շուրջ, Արցախի պատերազմի յաղթանակից յետոյ ոչ միայն չափազանցութիւն, այլ աներեւակայելի, ֆանտաստիկ կը թուար, կը համարուէր հիւանդ երեւակայութեան արդիւնք: Բայց քսան տարի անց այդ ամէնն արդէն իրականութիւն է, եւ ինչ որ երկրի նախագահ յայտարարում է, որ կոմպրոմիսի են եկել Հայաստանի սահմանների հարցում:

Իսկ ի՞նչ է պետութեան սահմանը: Պետութեան սահմանը դա պետութեան անկախութիւնն ու ինքնիշխանութիւնն է: Այսինքն, Հայաստանի անկախութիւնն արդէն կոմպրոմիսի առարկայ է: Այսինքն, Հայաստանն էլ արդէն կամացկամաց մօտենում է չհամաչափ:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Շաբաթական Էջ 7-էն

խարարութեան, ՀՀ քաղաքացիական ծառայութեան խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակայութեան ներքոյ: Մասնաւոր բուհերի քանակը 41 է, որից 35-ը հաւատարմագրուած բուհեր են, իսկ 6-ը ոչ հաւատարմագրուած հաստատութիւններ: ՀՀ բուհերում 2013-ի թուականի դրութեամբ սովորել է 90,145 ուսանող, իսկ օտարերկրացի ուսանողների քանակը կազմել է 2,725 մարդ: Հիմնականում ՀՀ բուհեր գալիս են սովորելու Ռուսաստանի դաշնութիւնից, Վրաստանից, Իրանից, Հնդկաստանից, Սիրիայից, որոնց ուսանողների թուաքանակը համապատասխանաբար կազմել է 903, 769, 403, 331, 108: Ուսանողների թուաքանակով առաջատար է Հանդիսանում տնտեսագիտական ուղղութեամբ իրենց մասնագիտութիւնները՝ 16,635 ուսանող: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը կազմում է 8,356 մարդ, որից 691-ը գիտութիւնների դոկտոր, 3,354-ը գիտութիւնների թեկնածու:

Վերջին տասնամեակում Հայաստանում մի շարք միջոցառումներ են ձեռնարկուել բարձրագոյն կրթութեան ոլորտը վերափոխելու ուղղութեամբ, սակայն դեռեւս գոյութիւն ունեն չլուծուած խնդիրներ ու բարդութիւններ, որոնք շեղում են ուղղութիւնը որոշող իրականացող դասաւանդման ու գիտահետազոտական աշխատանքների որակից եւ դանդաղեցնում են ոլորտի յետագայ վերափոխումների արդիւնաւէտ իրականացման ընթացքը: Կրթութեան ոլորտը հիմնականում ֆինանսաւորւում է պիւտձէի հաշուին: Կրթութեան բոլոր մակարդակների գծով ծախսերը մօտաւորապէս կազմում են Հայաստանի ներքին արտադրանքի (ՀՆԱ-ի) 3%-ը՝ Տնտեսական համագործակցու-

երկրի կարգավիճակի, երբ այդ երկրի սահմաններն աստիճանաբար դառնում են կոմպրոմիսի առարկայ:

Հետաքրքիր է, իսկ նոյն կոմպրոմիսն օրինակ եղե՞լ է Ռուսաստանի սահմանի հարցում, կապուած Ղրիմի հետ: Իհարկէ ոչ, որովհետեւ Եւրասիական միութիւնում հարցերը չեն բարձրանում հաւասարութեան սկզբունքով, այլ թոյլ օղակի: Իսկ թոյլ օղակը Հայաստանն է:

Բայց, կա մի բայց: Թոյլ օղակ է ինքնին Եւրասիական միութիւնը, եւ այն անկասկած ձեռքուելու է, եթէ անգամ իշխանութեամբ եւ ոչ իշխանութեամբ Հայաստանը պահեն պաշարուողների շարքերում: Եւ Հայաստանն անկասկած դուրս է գալու պաշարումից, սակայն ամենայն հաւանականութեամբ կորցրած աճելի ժամանակով: Թէ-եւ, չարեաց փոքրագոյնը կարող է լինել այն, որ Հայաստանի կորուստը միայն ժամանակը լինի:

«ԼՐԱԳԻՐ»

թեան եւ զարգացման կազմակերպութեան (ՏՀԶԿ) երկրների միջին ցուցանիշի մօտ կէտը: Հայաստանի բարձրագոյն կրթութեան (ԲԿ) համակարգի ներկայիս խնդիրներից մէկը դրա համեմատական կախուածութիւնն է այն պետական ու մասնաւոր ուսուցանողներից (միջոցներից, պաշարներից), որոնք ֆինանսաւորում են (դրամական միջոցներ են յատկացնում) այդ համակարգը եւ բուհերի ընթացիկ գործունէութիւնը: Ներկայումս Հայաստանի ԲԿ-ի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ տեսակարար կշռի տեսանկիւնից ցածր են այլ երկրների համեմատութեամբ, ինչի հետեւանքով ԲԿ-ի համակարգը մեծ կախուածութեան մէջ է ուսման վարձերից: ԲԿ ոլորտի ծախսերը ընդամենը կազմում են ՀՆԱ-ի 0,9 տոկոսը, իսկ ՏՀԶԿ երկրներում՝ 1,5 տոկոսը: Հայաստանում ԲԿ-ին ուղղուող պետական միջոցները ՀՆԱ-ի 0,3 տոկոսին չեն հասնում, որը էնպէս գիշում է ՏՀԶԿ-ի միջին 1,0 տոկոսին: Այս ոլորտին ուղղուող մասնաւոր միջոցները, գլխաւորապէս ուսման վարձերի տեսքով, չափազանց բարձր են միջազգային ցուցանիշերից, սակայն, նոյնիսկ այդ պարագայում բաւարար չեն ոլորտը յարատեւորէն ֆինանսաւորելու համար: Հայաստանի ուսանողների շուրջ 80 %-ը տարեկան ուսման վարձ է վճարում 150-800 հազար դրամի սահմաններում (400-2,200 ամերիկեան տոլար), ինչն ակնյայտօրէն գերազանցում է Հայաստանցիների գերակշիռ մասի կարողութիւնները: Հայաստանում գործում է ուսանողներին ֆինանսական աջակցութիւն ցուցաբերելու երկու եղանակ, մասնաւորապէս՝ ուսանողական նպաստներ եւ կրթաթոշակ:

Համեմատելով ԽՀ-ի եւ ՀՀ-ի բուհերի քանակը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ուսանողների թուաքանակը, ակնյայտ է դառնում, որ ՀՀ-ում նրանց թուա-

քանակը աւելի շատ է: Համեմատելով իրար հետ, նկատում ենք, որ ԽՀ-ի բուհերում

1. Ուսուցանում էին 156 մասնագիտութիւն, դասաւանդում էին 21 ակադեմիկոս եւ թղթակից անդամ, որոնք ՀՀ-ի բուհերում չկան:

2. Դասախօսներն ստանում էին բաւարար կաշուն աշխատավարձ եւ նուիրուած էին աշխատում լաւ մասնագէտներ պատրաստելու համար, հակառակ ՀՀ-ի բուհերի դասախօսների, որոնք նոյնիսկ դասաւանդելու ժամանակ մտածում են իրենց ապրուստը հոգալու լրացուցիչ եկամուտի մասին, որի պատճառով էլ լաւ մասնագէտներ չեն պատրաստում:

3. Բուհերը ընդունում ուսանողները վստահ էին, որ աւարտելուց յետոյ աշխատանքի կ'ընդունուեն ժողովրդական տնտեսութեան ճիւղերում եւ կը ստանան նուազագոյն աշխատավարձ իրենց ապրելակերպը ապահովելու համար, իսկ ՀՀ-ի բուհերը վստահութեամբ ընդունում են միայն ղեկավարների երեխաները, որոնք չսովորելով հանդերձ, վստահ են, որ աւարտելուց յետոյ լաւ պաշտօններ կ'ունենան, իսկ մնացած խաւի երեխաները ոչ մի վստահութիւն, երաշխիք ու յոյս չունեն, որ ինստիտուտը աւարտելուց յետոյ աշխատանքի կ'ընդունուեն ու բաւարար աշխատավարձ կը ստանան իրենց ապրուստը ապահովելու:

Ահա թէ, ՀՀ-ի բուհերը ինչու են կորցրել իրենց հեղինակութիւնը ու չունեն բաւարար ուսանող, երբ Խորհրդային Հայաստանի բուհերը ընդունուելու ժամանակ մեծ մրցակցութիւն (կոնկուրս) կար, երբեմն մի տեղի համար նոյնիսկ 3-4 դիմում...:

2011 թ. իմ Երեւան այցելութեան ժամանակ գրուցեցի մի դասախօսի հետ, որը 30 տարի է դասաւանդում է Երեւանի իմ աւարտած բուհում, եւ հետաքրքրուեցի բուհերի վիճակով: Նա պարզաբանեց որոշ հարցեր, որը ներկայացնում եմ ընթերցողին:

-Իմ աշխատած համալսարանում ուսման որակը չի գտնուում խորհրդային շրջանի մակարդակին: Պատճառը դասաւանդող որակաւոր դասախօսները չեն, այլ մի խումբ շփացած, երես առաւ ու լիտիացած ուսանողներ, որոնք հիմնականում օլիգարխների երեխաներն են ու բոլորովին չեն յարգում դասախօսներին, լարանը դարձրել են հաճոյքի սենեակ, երբ ուզում են դուրս ունենալ են անում, իհարկէ «խնդրելով» սուեալ դասի դասախօսին: Երբեմն ներս մտնելուց մի քանի րոպէ անց «խնդրում են» դուրս գալ: Յաճախ նրանք չեն ենթարկուում դասախօսներին եւ չեն սովորում, բայց պահանջում են նշանակել դրական գնահատական: Երբ դասախօսը չի ուզում նշանակել դրական գնահատական «ոտաբերիկ» ուսանողին՝ նշելով, որ եթէ չսովորի դուրս կը մնայ համալսարանից, վերջինս պատասխանում է,

որ յաջորդ տարին նորից կ'ընդունուի ու կը շարունակի սովորել: Բայց շատ դէպքերում վերեւից ճնշումների միջոցով դասախօսը ստիպուած է լինում նշանակել, որպէսզի իր մի կտոր հացից չզրկուի: Ուսանողների թիւն էլ է քիչ, որից կախուած է դասախօսի աշխատավարձը: Պետութիւնը դասախօսին ամսական վճարում է 30 հազար դրամ աշխատավարձ (մօտ 84 տոլար), իսկ նրա աշխատավարձի լրացումը կատարուում է ուսանողների ուսման վարձից: Հետեւաբար ուսանողները թիւը դասախօսի աշխատավարձի որոշիչն է: Իսկ դպրոցների դասարանների թիւը 10-ից դարձնելով 12, բուհերը երկու տարի նոր ուսանողներ չեն ունենալու, որի պատճառով աւելի է վատթառանալու դասախօսների վիճակը:

Նշեմ, որ մեր սովորած ժամանակ մեծ յարգանք ու պատիւ կար դասախօսների նկատմամբ, որը փոխադարձ էր, դասախօսները սիրելով ուսանողներին, ամէն ինչ անում էին նրանց գիտելիքներով գինելու համար:

Խորհրդային Հայաստանում բուհ ընդունուելու մեծ մրցակցութիւն (կոնկուրս) կար, մի տեղի համար դիմում էին մի քանի հոգի, իսկ անկախ Հայաստանի բուհերը ուսանողի կարիք ունի: Այդ մասին արտայայտուեց համալսարանի դասախօսներից մէկը, որ բոլոր դիմողներն էլ ընդունուելու են, որովհետեւ տեղերը շատ են, եւ եթէ չընդունեն, չեն կարող ապահովել դասախօսների աշխատարձը...:

Հարց տանք Հայաստանի նախագահին եւ գիտութեան ու կրթութեան նախարարին, այս ձեւով շարունակելով արդեօ՞ք Հայաստանը կարող է պահել իր դասախօսներին եւ որակով շրջանաւարտներ ունենալ ժողովրդական տնտեսութիւնը զարգացնելու ու ժողովրդի տնտեսական վիճակը բարելաւելու համար: Հայաստանի գիտական ուժը պէտք է ուղարկութեան արժանանայ պետութեան կողմից, որպէսզի նա չչարտուանկի կորցնէ գիտաշխատողներին ու կրթական ասպարէզին նուիրուած մասնագէտներին:

Մի անգամ եւս կրկնեմք, որ Խորհրդային Հայաստանում բուհ աւարտողները անմիջապէս նշանակուում էին աշխատանքի, իսկ անկախ Հայաստանում բուհում սովորողի առաջին մտահոգութիւնը աշխատանք գտնելն է. շատ դէպքերում գործատեղերում էլ չեն ընդունում նրանց, նկատի ունենալով իրենց ուսման որակի մակարդակը...:

Կարծում ենք, որ լուրջ աշխատանք պէտք է տարուի Երեւանի բուհ աւարտած ուսանողի հեղինակութիւնը բարձր պահելու ու նրանց աշխատանք վստահելու համար, որպէսզի բուհ ընդունուողը վստահ լինի, որ աւարտելուց յետոյ անմիջապէս աշխատանք կ'ունենայ, իր նուազագոյն ապրուստը կապահովուի եւ չի հեռանայ Հայրենիքից...:

**SAVE THE DATE**  
AMAA-Haigazian University Celebratory Banquet in honor of Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq.; Saturday, November 15, 2014, 6 pm, Beverly Hills Hotel, \$200; Information: Julie Aharonian 818-368-5266; Katia Kermoyan 818-242-5064.

**SAVE THE DATE**  
DECEMBER 6 - Saturday: Western Diocese Eleventh Annual Christmas Ball; 7:00 p.m. Reception and Gala Tree Lighting Ceremony, 8:00 p.m. Dinner-Dance and Program honoring Ten Young Professional Community Activists, Nazareth and Sima Kalaydjian Hall, 3325 North Glenoaks Blvd., Burbank. For further info call the Western Diocese (818) 558-7474.

**ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ**  
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Հիլտա Աճեմեան բախտաւորուած են մանչ գաւակով մը, զոր անուանած են Սեդրակ:  
Մեր շնորհաւորութիւնները ծնողքին ու ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Սեդրակ եւ Ալին Աճեմեաններուն:  
«Մասիս»

**ՄԱՐԱԶԴ**



**ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՍԸԶԵԱՆ**  
1921-2014

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր եւ մեծ հօր **ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՍԸԶԵԱՆ**ի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Հոկտեմբերի 8ին, 2014, Կլենտէյլի էպլէնթիսթ հիւանդանոցին մէջ: Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, Հոկտեմբեր 11ին կ.ա. ժամը 10:30ին, Պըրպէնքի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ: Իսկ թաղումը Ֆորըսթ Լոն գերեզմանատան մէջ: Հոգեճաշ մատուցուեցաւ Ֆինիսիա ճաշարանին մէջ:

Սգակիրներ՝ Այրին՝ Իւդաբեր Եղաւթեան, Զաւակները՝ Տօքթ. եւ Տիկ. Ռուբէն եւ Շողիկ Եղաւթեան եւ զաւակները Ալին եւ Լորիկ Տօքթ. եւ Տիկ. Յարութ եւ Մայտա Եղաւթեան եւ զաւակները Գարինա եւ Կարօ եւ համայն հարազատներն ու բարեկամները: Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը ինդրուի կատարել Հալէպի Կիլիկեան ճեմարանին՝ հասցէ 17925 Lake Vista Drive, Encino, CA 91316:

**ՄԱՐԱԶԴ**



**ԱԼԻՍ ՆԱԶԻՐԵԱՆ**  
(Ծնեալ՝ Հոկտ. 31, 1960ին, Պաղտատ, Իրաք)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր, դստեր, հարսին, քրոջ եւ հարազատին՝ Ալիս Նազիրեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Հոկտեմբեր 14, 2014ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Հոկտեմբեր 20, 2014, կէսօրուան ժամը 12ին, Պըրպէնքի Սրբոց Ղեւոնդեանց Առաջնորդանիստ տաճարին մէջ, 3325 N. Glenoaks Blvd., ապա թաղումը՝ Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝ Ամուսինը՝ Վարդան Նազիրեան, Զաւակը՝ Վահագն եւ Իգայէլ Նազիրեան եւ զաւակը՝ Վինսընդ-Վարդան Դուստրը՝ Արփի Նազիրեան Դուստրը՝ Նորա Նազիրեան եւ նշանածը՝ Սահակ Վարդգէսեան Կեսուրը՝ Սիրարփի Նազիրեան Տաղրը՝ Համբարձում եւ Սիլվա Նազիրեան եւ զաւակները Տաղրը՝ Սարգիս եւ Լուսինէ Նազիրեան եւ զաւակները Մայրը՝ Օժէն Մագմանեան Եղբայրը՝ Արտաշէս եւ Լոռն Մագմանեան եւ ընտանիք Եղբայրը՝ Աւետիս եւ Ալիս Մագմանեան եւ ընտանիք Քոյրը՝ Անահիտ եւ Սուրէն Պապայեան եւ ընտանիք Քոյրը՝ Անուշ եւ Օհաննէս Զաքարեան եւ ընտանիք Եղբայրը՝ Վարդիվառ Մագմանեան եւ ընտանիք Քոյրը՝ Ալտա եւ Արմէն Մուրատեան եւ ընտանիք Քոյրը՝ Ազատուհի Մագմանեան եւ համայն հարազատներն ու բարեկամները: Թաղման արարողութեան հետք հոգեճաշ պիտի մատուցուի վերոյիշեալ տաճարի «Գալայճեան» սրահին մէջ: Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը ինդրուի կատարել Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին, Western Diocese:

**ՈՉ ԵՄ Է ԸՆԿԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՍԸԶԵԱՆ**

Յաւով իմացանք Հալէպի ծանօթ ազգայիններէն հասարակական բեղուն գործիչ ընկեր Կարապետ Եղաւթեանի մահը: Հանգուցեալը եղած է Հալէպի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան վարիչ Մարմնի ատենապետ: Վարած է նաեւ բազմաթիւ պատասխանատու պաշտօններ ազգային եւ կրթական հաստատութիւններէ ներս, վայելած է բոլորին սէրն ու համակրանքը: Իր 80 ամեակին առիթով արժանացած էր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի Հայրապետական օրհնութեան գիրին:

Իր մահով ընտանիքը կը կորսնցնէ անբասիր եւ տիպար հայր մը եւ ամուսին մը, իսկ հայ գաղութը՝ մեծ հայրենասէր ու գաղափարաւոր էր տեսլապաշտ անձ մը, որուն բովանդակ կեանքը եղած է համակ նուիրում ու ծառայութիւն իր պատկանած կուսակցութեան եւ հայրենիքին:

Մեր ցաւակցութիւնները հանգուցեալի այրին Տիկ. Իւդաբերին, ինչպէս նաեւ իր զաւակներուն՝ բժիշկներ Յարութիւն եւ Ռուբէն Եղաւթեաններուն, գաղափարի ընկերներուն եւ համայն հարազատներուն:

Յարգանք իր վաստակին եւ բիւր յարգանք իր չիշտակին:  
**Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ**

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՍԸԶԵԱՆ**ի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրին Տիկ. Իւդաբեր Եղաւթեանին, ՆՄՄՄ վարչութեան նախկին անդամներ Տօքթ. եւ Տիկ. Յարութիւն Եղաւթեանին եւ Տօքթ. եւ Տիկ. Ռուբէն Եղաւթեանին, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ԱԼԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ**ի մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. «Արսէն Կիտուր» մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Տիար Վարդան Նազիրեանին, եղբօր՝ Տէր եւ Տիկ. Աւօ եւ Ալիս Մագմանեանին, ինչպէս նաեւ ընտանեկան համայն պարագաներուն:

**ՅԱՒԱԿՑԱԿԱՆ**

**ՇՈՒՇԻԿ ՅԱԿՈՒԲԵԱՆ**ի մահուան առիթով Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Պերճուհի Մարգարեան եւ Տէր եւ Տիկ. Պողոս եւ Արփի Մարգարեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՀՈԳԵՐԱՆԳԻՍ**



**ԹԱՄԱՐԱ ԳՈՀԱՐ ԽԱԼԱԹԵԱՆ**ի մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, Կիրակի, 26 Հոկտեմբեր, 2014, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd. Pasadena CA 91107:

Սգակիրներ Տէր եւ Տիկ. Գագիկ եւ Գայեանէ Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Անիշա Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Էտիք եւ Ամալիա Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Աշոտ եւ Նարինէ Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Սամուէլ եւ Էլմիրա Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Փիթըր եւ Լիլիք Katz-Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Հայկ եւ Լալա Քոչարեան-Ղազարեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ալլա Աճէմեան-Ղազարեան եւ զաւակները Հոգեհանգստեան արարողութեան հետք հոգեճաշ պիտի մատուցուի Old Yerevan ճաշարանին մէջ, 1351 E. Colorado Street, Glendale, CA 91205

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net

### ՈՒՍՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ »ԷՊԻ ԿԻԼԻԿԻԱ ԵՒ ԱՐԵՄՏԱՐԱՅԱՍՍԱՆ

Շարունակում է 15-ին

սրտակէզ ցաւը մեր սիրտերուն մէջ, կ'ուղղուինք դէպի հիւսիս, ուրիշ տեսակ մեծ ցաւ պատճառող ուրիշ քաղաք մը՝

#### ԿԱՐՍ

Արեւմտեան Հայաստանի նշանաւոր քաղաքներէն մէկը, որու պատմութիւնը դարեր շարունակ, դժբախտաբար եղած է համակ թախիծ եւ ողբերգութիւն, ոչ միայն հին հեթանոս եւ իսլամ ցեղերու կողմէ քանդուելուն պատճառով, այլ նաեւ

-ինչ որ աւելի ցաւալի է - բիւզանդացի, վրացի եւ ռուս քրիստոնեայ ազգերու դաւադրութեանց գոհը դառնալով: Բայց անկա տակաւին եղած է բարձրագոյն արուեստի, մշակույթի, առեւտրական եւ քաղաքակրթութեամբ յատկանշուած քաղաք մը, երբ կ'ըլլայ Բագրատունիներու թագաւորութեան մայրաքաղաքը 920-ական թուականներուն:

Բայց հետագային Սելճուկները, Մոնղոլները եւ Պարսիկները գանդակ կը գրաւեն, ապա Օսմանցիները 1514-ին: 1877-78 թուականին, ռուս-թրքական պատերազմի աւարտին, Կարսը եւ Արտասանը կը միացուին Ռուսիոյ: Իսկ 1919-ին, անոնք մաս կը կազմեն Արեւելեան Հայաստանին եւ փոխտական հայերը կը վերադառնան հոն եւ կը սկսին վերականգնել իրենց քանդուած տուները: Բայց դժբախտաբար, միայն կարճ ժամանակուայ մը համար, որովհետեւ 1920-ին, երբ կը սկսի Համայնավարական շարժումը, բաւական մեծ թիւով հայեր կը նախընտրեն անոր միանալ: Իբր հետեւանք այս պատակտունին, աւելի քան 8000 հայեր գոհ կ'ըլլան քեմալական բանակի յարձակումներուն: Ապա, Մարտ 16, 1921-ին Մոսկուայի մէջ ստորագրուած դաշնագիրով (անշուշտ առանց հայերու մասնակցութեան) Կարսը կը տրուի - թրեւեւ աւելի շիտակ պիտի ըլլար ըսել ռուսներուն կողմէ կը նուիրուի թուրքերուն:

Սակայն մինչ կը մօտենանք Կարսին, անոր այս քաղաքական խարդաւանքներու ողբերգութենէն աւելի գիտ կը հետաքրքրէ միայն որոշ վայր մը, եւ կ'ուզեմ վայրկեան մը առաջ հոն ըլլալ անպայման - մեծահամբաւ, հանճարեղ, թուրք հայրենասէր եւ մասիսապաշտ բանաստեղծ՝ Եղիշէ Չարենցի հօրենական տունէն մնացած միակ փլատակ պատը: Բայց բուն հարցը փլատակ պատը չէ, հակառակ մասունքի մը պէս ըլլալու իրողութեան եւ պարզած այնքան սրտամոխի տեսարանին, այլ անոր վրայ գետեղուած միաբաւ գրութիւնը: Այո՛, միայն մէկ բառ, որ շատ աւելի յուզիչ է եւ անբաղձալի քան որեւէ մահազո, որովհետեւ մահազոները հազիւ մէկ կամ երկու օր կը տեսնուին եւ ապա կը վերցուին: Բայց այս չըլլալիք եւ սրտակէզէք բառը եւ արդէն առաջին անգամ հոն տեսած էի վեց տարի առաջ, Սեպտեմբեր 2007-ին: Ապա երկրորդ անգամ 24 Սեպտեմբեր 2012-ին եւ հիմա ալ 3 Հոկտեմբեր 2013-ին: Բառը՝ satilik, այսինքն՝ ծախու:

Բայց ներողութիւն: Ո՞վ, որու ստացուածքը կը ծախէ եւ ի՞նչ իրաւունքով: Իրականութեան մէջ Չարենցի հօրենական տունը ծախել կը նշանակէ ոչ միայն գանդակ միանգամընդմիշտ կորսնցնել, այլ

նաեւ անգամ մը եւս մեղսել Չարենցը եւ սրբապղծել անոր անթաւանամ եւ սրբազան յիշատակը:

2012-ի մեր այցելութեան ատեն, մեր խումբին առաջնորդը այս ուղղութեամբ ուրախութիւն պատճառող լուր մը տուաւ մեզի, որպէս թէ՛ Եւրոպայի Մշակութային Հիմնադրամը, ընդառաջելով Կարսի քաղաքապետարանի խնդրանքին - խոստացած է գրեթէ բոլոր ծախսերը հոգալ, պայմանաւ որ ըլլալիք կառուցը գործածուի միայն որպէս տեսակ մը մշակութային կեդրոն: Բայց հաւանաբար ամենէն լաւ բանը պիտի ըլլար որ Պոլիսէն կամ Թուրքիոյ որեւէ շրջանէն հայ մը գանդակ գնէ (եթէ օտար մէկը իրաւունք չունի գանդակ գնելու), անշուշտ անոր վրայ Եղիշէ Չարենցի անունով տուն-թանգարան մը շինելու հասկացողութեամբ: Այն ատեն, վատահաբար արտասահմանէն անձ մը, կամ որոշ անձեր պիտի գտնուին, որոնք սիրով եւ ուրախութեամբ պիտի հայթայթեն թէ՛ հողին գինը եւ թէ՛ թանգարանի շինութեան ծախսերը, ի յիշատակ անմահանուն բանաստեղծ՝ Եղիշէ Չարենցի: Յուսանք այս հասկացողութեամբ շուտով կարգադրութիւն մը տեղի կ'ունենայ եւ ասկէ ետք Կարս գացող հայ ուխտաւորները երբ կ'այցելեն Չարենցի հօրենական փլատակ տունը, անկէ մնացած միակ փլատակ պատին վրայի ծախու բառին տեղ, մեծ ուրախութեամբ եւ բարձրաձայն կը կարդան ծախուած (սաթըլ-մըլ) ըլլալու ուրախ լուրը:

Բայց դեռ, ասկէ շատ աւելի կարեւոր եւ շատ աւելի մեծ երազ մը կայ որ ամէն բանէ առաջ իրականանալու է: Առեւանգուած հարսի մը վերադարձը իր մօր ընտանիքին: Ո՞վ է այդ հարսը: Ան Կարսն է, Հայրենի հարսը, որ առեւանգուած է իր հօրմէն, մօրմէն եւ ընտանիքէն - Մայր Հայաստանէն: Սակայն անկա միակ առեւանգուած հարսը չէ, ոչ: Դժբախտաբար մեծ է անոնց թիւը: Իրականութեան մէջ վասպուրականի, Տարօնի, Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի բոլոր քաղաքներն ու գիւղերը առեւանգուած մէկական դժբախտ, կոյս եւ անմեղ հարսեր են որոնք կ'աղաչեն, կը պաղատին մօտ հարիւր տարիէ ի վեր որ իրենց հօրենական տունը դառնան:

Կարս, Կարս, Կարս, հայրեմի հարս, Ե՞րբ դու նորից Մայր հայաստան մ'ընդունիր վերադառնա:

Ե՞րբ... Բայց երբ մենք պիտի սորվինք որ, առեւանգուած խեղճ հարսերը, եթէ նոյնիսկ իրենք ուզեն վերադառնալ իրենց հօրենական տունը, չեն կրնար, անկարելի է որ վերադառնան: Չանոնք վերադարձնելը իրենց ծնողներուն ձիտին պարտքը եւ աւագ պարտականութիւնն ու պատասխանատուութիւնն է: Եւ ասիկա, լուրիկամբ կամ թուրկամբ, սիրով կամ սուրով, եւ կամ որեւէ կերպով կամ միջոցով, տարբերութիւն չ'ընեն: Արդեօք պիտի գա՞յ այդ օրը: Կրնա՞ք լաւատես ըլլալ...:

Բայց տունի մը մէկ պատին վրայ եղած միայն մէկ բառը մեզի շատ երկար մտորումներ եւ մեծ մտրմոքներ պատճառեց ու շատ հեռուն տարաւ մեզ, թէ՛ն ակամայ, եւ ասկայն տեղին եւ իրաւամբ: Եւ ուրեմն հիմա, որպէս ուխտաւորներ, ստիպուած ենք շարժիլ եւ շարունակել մեր ճամբան:



Սակայն հազիւ քիչ մը առաջացած, նորէն կը ստիպուինք կանգ առնել պատմական ուրիշ կառուցի մը առջեւ:

Ինչպէս Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի բոլոր քաղաքները, Կարսն ալ, կարգ մը մեծ եւ փոքր եկեղեցիներու շարքին, ունի նաեւ գլխաւոր տաճար մը կամ մայր եկեղեցի մը: Կարսի պարագային, այդ մէկը պատմական եւ նշանաւոր Սուրբ Առաքելոց եկեղեցին է, որ կառուցուած է 932-937 թուականին, Աբբաս Բագրատունի թագաւորին կողմէ: Ուշագրաւ է եկեղեցիի մուտքի յուշաքարին վրայ արձանագրուած եկեղեցիին հակիրճ պատմութիւնը, որու մէջ անիկա ներկայացուցած է անգլերէնով որպէս Apostles Church (Kumbet Mosque) որ, անշուշտ ուղղակի եւ պարզապէս, անոր անունին հայերէն բառացի թարգմանութիւնն է: Աբբաս թագաւոր գանդակ այս անունով կոչած է ի յիշատակ Յիսուսի 12 առաքեալներուն, զմբէթին վրայ փորագրելով նաեւ անոնց քանդակները: Կ'ըսուի թէ Եղիշէ Չարենց իր «Երկիր Նայիրի» գիրքին մէջ գրած է, ինչ որ է Նոթր Ծամբ Փարիզի ժողովուրդին համար, նոյնն է Սուրբ Առաքելոց եկեղեցին Կարսի ժողովուրդին համար:

Սակայն, թուրքերը եկեղեցիին վերոյիշեալ հակիրճ պատմութեան մէջ բնաւ չիշած չեն թէ անիկա հայ եկեղեցի մը եղած է: Անշուշտ չէին կրնար նաեւ մարտել անոր եկեղեցի մը ըլլալու իրողութիւնը ինքնին, ըլլայ անիկա հայ կամ որեւէ եկեղեցի: Հետեւաբար, գանդակ մզկիթի կը վերածեն 1064-ին: Բայց հետաքրքրական - քիչ մըն ալ գարմանալի - է գիտնալ թէ, երբ սելճուկները կը գրաւեն Կարսը, անոնք թոյլ կու տան որ անիկա նորէն եկեղեցի վերածուի որոշ ժամանակ մը: Իսկ հետագային երբ անիկա կը կործանի երկրաշարժի մը պատճառով, այլեւս կը գործածուի որպէս պահեստի տեղ, ապա երկար ժամանակ որպէս թանգարան: Վերջ ի վերջոյ, նորէն կը սկսի գործածուիլ որպէս մզկիթ Kumbet Mosque անունը կրելով: Եւ երբ 2007-ին հարկ կ'ըլլայ գանդակ նորէն նորոգել, զմբէթի վրայի խաչին տեղ կը դրուի մահիկ մը, սակայն առանց միանալիքի: Բայց իրականութեան մէջ, անիկա տակաւին ուղղակի եկեղեցիի մը երեւոյթը ունի, թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին կառուցով, իր բազմաթիւ քանդակներով եւ որմնանկարներով: Եւ այս բոլորը, շատ հաւանաբար, պարզապէս արգելք հանդիսանալու անոր որպէս եկեղեցի գործածուելուն: Բայց, ի սէր Աստուծոյ, ինչո՞ւ մզկիթ մը եւս հոն, երբ եկեղեցիէն հազիւ քանի մը հարիւր մէթր հեռու միայն, չորս կողմերուն վրայ ալ կան չորս հսկայ մզկիթներ: Ինչո՞ւ... Շատ հաւանա-

բար, եւ պարզապէս քրիստոնեաներուն եւ յատկապէս հայերուն, սիրտը խառնելու, քիթը ձգելու եւ գլուխը ցաւցրնելու համար: Եթէ ոչ, հապա ինչո՞ւ...

Արդէն ճիշդ այս հոգեվիճակին ալ ենթարկուած ըլլալով, այսինքն՝ բաւական սրտի խառնուք եւ գլխուցաւ ունենալէ ետք, կ'երթանք Grand Ani պանդոկ ընթրելու եւ հանգստանալու համար:

Ընթրիքէն վերջ մինչ կը պատրաստուիմ սենեակ բարձրանալու, նոյն պանդոկին մէջ իջեւանած հայ մը կը մօտենայ ինծի հարցում մը հարցնելու համար, ինչ որ հետաքրքրական, հաճելի եւ ուրախութիւն պատճառող առիթ մը եղաւ երկուքիս համար ալ: Թէեւ գիրար անձամբ չէինք ճանչնար, բայց միայն մօտ կէս ժամ առաջ պատահամբ հանդիպել էինք իրարու, Չարենցի տունին մօտերը գտնուող Վարդանի կամուրջին վրայ (ըստ կարսեցիներուն Վարդան Մամիկոնեանը շինած է գանդակ), որպէս մէկ անդամը Լոս Անճելըսէն եկած աւելի քան 30 հոգինոց խումբ մը ուխտաւորներու: Բայց ի՞նչ էր անոր հարցումը:

Նախ պէտք է ըսել որ, ընթրիքը սկսելէն առաջ, մեր փոխադրակաւքին հիանալի շարժավարը՝ Սելճուկ, մեր խումբի իւրաքանչիւր անդամին տուած էր տուփ մը Այն-թապի նշանաւոր պիստակ: Հիմա, այս հայը երբ կը տեսնէ պիստակին տուփը ձեռքիս մէջ, կը մօտենայ ինծի եւ կը հարցնէ՝

- Ներողութիւն պարոն, ի՞նչ է ձեր ձեռքին մէջ եղած այդ գիրքը, Սուրբ Գի՞րք է:

Երբ կը պատասխանեմ իրեն թէ՛ Սուրբ Գիրք չէ, հապա պիստակի տուփ, բայց ես Սուրբ Գիրք կը կարգամ եւ կը քարոզեմ, «ուրեմն պատուելի՞ ես», կ'ըսէ եւ կը խնդանք ու կը ծանօթանանք:

Անունը՝ Յարութիւն Կէրիկեան, անդամ է Կլէնտէյլի Աւետարանական այն եկեղեցիին որու հովիւն է Վեր. Դանիէլ Ալպարեան: Ապա կու տայ իր վկայութիւնը, թէ ինք ապաշխարած է 53 տարեկանին, երկար տարիներ ինքնիւր հետ պայքարելէ եւ ձգձգելէ ետք: Քանի մը հոգեւոր խորհրդածութիւններ կու տամ իրեն, քիչ մըն ալ կը խօսինք ասկէ անկէ եւ ապա, չեմ գիտեր ինչ բանէ թելադրուած, 119-րդ Սաղմոսին 19-րդ համարին առաջին ստողը կը յանձնեմ իր ուշադրութեան. «Ես պանդուխտ եմ երկրի վրայ»...: Իրարու գիշեր բարի ըսելէ ետք, ուրախ եւ գոհունակ սրտով կը բարձրանամ սենեակ քնանալու, յաջորդ առտու երթալու համար հազարումէկ եկեղեցիներու նշանաւոր քաղաք: Արդեօք աշխարհի վրայ կա՞յ հայ մը որ չի գիտեր թէ, ի՞նչ է անոր անունը... չը՞... շիտակ... Անի: